AZG
armenian newspaper

Ա տարի, # 15, ապրիլ 6, 1991

Ռուսաստանի պրեզիդենտի ընտրությունները անցկացվելու են հունիսի 12-ին

ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումարը ապրիլի 4-ին կայացած նիստում որպես հիմք ընդունեց ՌԽՖՍՀ բարձրագույն պետական մարմինների միջեւ լիազորությունները վերաբաշխելու մասին որոշման նախագիծը, որը կօգնի իրագործելու հակաճգնաժամային միջոցառումները եւ համագումարի որոշումները:

Փաստաթղթում, մասնավորապես, նշվում է, որ հանրապետության Գերագույն խորհուրդը իրավունք ունի օրենքներ հրապարակել ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորների իրավասությանը վերաբերվող հարցերի վերաբերյալ, հետագայում այդ օրենքները համագումարում վավերացնելու պայմանով: Գերագույն խորհրդի նախագահը եւ նախարարների խորհրդի նախագահը իրավունք ունեն գործող կանոնադրության սահմաններում հրապարակել կարգադրություններ, որոնք ենթակա են կատարման ՌԽՖՍՀ տարածքում:

Գերագույն խորհրդի, նրա նախագահության եւ նախագահի՝ այդ որոշմամբ սահմանված լիազորությունները չեն կարող օգտագործվել իրավականորեն ընտրված պետական իշխանության մարմինների ցրման եւ ՌԽՖՍՀ-ի ազգային պետական կառուցվածքի փոփոխման նպատակով: Ժողովրդական պատգամավորների համագումարը իրավունք է վերապահում փոխել կամ չեղյալ հայտարարել Գերագույն խորհրդի, նախագահության կամ նախագահի կողմից ընդունված ամեն մի որոշում:

Որոշման մեջ սահմանված են ՌԽՖՍՀ-ի ժողովրդական պատգամավորների հերթական համագումարի եւ Ռուսաստանի պրեզիդենտի ընտրությունների ժամկետները, որոնք անցկացվելու են համապատասխանաբար այս տարվա մայիսի 21-ին եւ հունիսի 12-ին:

Երեկ, ապրիլի 5-ին, ՌԽՖՍՀ համագումարի կեսօրվա նիստից հետո փոխնախագահներ Գորյաչեւան եւ Իսաեւը մամլո ասուլիսում հայտարարեցին, թե պրեզիդենտական ընտրությունների եւ նախագահ Ելցինի ներկայացրած որոշումների հաստատման քվեարկությունները ընդունվեցին հապճեպորեն:

interfax, մեր սեփ. թղթ.

Բելգիան ընդդիմանում է Թուրքիայի մուտքին ԵԸՀ

ԲՐՅՈՒՍԵԼ. Բելգիայի խորհրդարանն ընդունեց մի բանաձեւ, որով դեմ է կանգնում Թուրքիայի Եւրոպական ընդհանուր շուկա (ԵԸՀ) մուտքին, այնքան ժամանակ, քանի դեռ այդ երկիրը չի ընդունում քրդական մշակութային-լեզվական ինքնությունը: Բանաձեւին կցված է նաեւ մի փաստաթուղթ, որով առաջարկվում է, որ միջազգային ժողով հրավիրվի քրդական հարցին արդար լուծում գտնելու համար:

Բանաձեւի քվեարկությունից առաջ, որին մասնակցեց նաեւ երկրի վարչապետն իր նախարարական լրիվ կազմով, առանձին ելույթ ունեցավ Ֆլաման ընկերվարական-քրիստոնյա կուսակցության ներկայացուցիչ Հյուգո Վան Ռոնպեն, որը հիշեցրեց, թե Սեւրի պայմանագրով նախատեսվում էր քրդերին անկախ պետականություն շնորհել, սակայն Անթաթուրքը 1923 թվին արգելք էր դարձել դրան, հայտարարելով, թե *«ով կտարյուն թուրք չէ՝ կարող է Թուրքիայում միայն ծառա ու գերի լինել»*: Վան Ռոնպեն ավելացրեց, որ *«հարկավոր է մի լավ դաս տալ Թուրքիային»*: Թուրքական թերթերն ու քաղաքական շրջանակներն, իրենց հերթին, պահանջում են, իբրեւ խորհրդարանի որոշման դեմ բողոքի նշան, հետ կանչել Բելգիայում Թուրքիայի դեսպանին:

(Այս մասին ավելի մանրամասն՝ հաջորդ համարում):



Ծաղրանկար՝ ՍՄԲԱՏ ԹՈՐՈՍՅԱՆԻ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը Իրաքից պահանջում է դադարեցնել քրդերի դեմ հալածանքները

Ֆրանսիայի ներկայացրած որոշման նախագիծը քննարկելով, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը երեկ ընդունեց մի որոշում, որը դատապարտում է Իրաքում քրդերի եւ շիաների դեմ կատարվող խժդժությունները, իրաքյան իշխանություններից պահանջելով անհապաղ դադարեցնել հալածանքները, մյուս կողմից՝ աշխարհի երկրներին կոչ ուղղելով մարդասիրական օգնություն ցույց տալու Թուրքիայի եւ Իրանի սահմանագլուխներին կուտակված փախստականներին:

Իսկ դրանց թիվը երեկ արդեն հասել էր քառորդ միլիոնի՝ Թուրքիայի սահմանամերձ շրջաններում, 750 հազարի՝ Իրանում: Այս թվերն ամեն ժամ ավելանում են: Մեքենաներով, սայլերով, ջորիներով ու հետիոտն, Իրաքի հյուսիսային ծյունապատ լեռնանցքներից դեպի արեւմուտք եւ արեւելք տասնյակ կիլոմետրերի վրա ձգվում են քրդերի քարավանները, մինչ «տեղ» հասածներն ապրում են օրհասական պայմաններում, զուրկ՝ սննդից, պատսպարանից եւ սանիտարական անհրաժեշտություններից: Երկուշաբթի գիշերը, իրանյան սահմանի մոտ, Իրթիչ քաղաքից փախածներից մահացել էին 120 երեխա:

Երեկ սկսվեց մարդասիրական զանգվածային օգնություն: Առաջին հասնողները եղան ֆրանսիացիները, որոնց հետեւեցին անգլիացիներն ու բելգիացիները, տեղ հասցնելով վրաններ, տաք ծածկոցներ, սրճեղեն եւ հագուստ, մինչ Եւրոպայի համագործակցության խորհուրդն Անվտանգության խորհրդի որոշումից անմիջապես հետո 5 միլիոն դոլլարի անմիջական օգնություն քվեարկեց:

Զուգահեռաբար, երկուշաբթի օրը Բրյուսելում իրաքյան դեսպանատան վրա քրդերի գործած հարձակումից հետո, նույնը կրկնվեց երեկ՝ Լոնդոնում եւ Ստամբուլում: Այս վերջին քաղաքում իրաքյան դեսպանատան ներսից կրակ բացվեց ցուցարարների վրա, որոնցից վիրավորվեց երկու հոգի:

Մյուս կողմից, Իրանի կրոնապետ Այաթոլլահ Խամենեին երեկ պայքարը շարունակելու կոչ ուղղեց Իրաքի ժողովրդին՝ ընդդեմ Սադդամ Հուսեյնի իշխանության, մինչեւ վերջինիս տապալումը:

Իր հերթին, ԱՄՆ-ի պրեզիդենտ Բուշը Ֆլորիդայից հայտարարեց, թե իր երկիրը շահագրգռված չէ ուժ գործադրելու Իրաքի ներսում եւ թե Սադդամ Հուսեյնի վարչության գոյության հարցը վերաբերում է միայն իրաքյան ժողովրդին: □

Լիբանանյան կաբինետը պաղեստինցիներին կինաթափվելու վերջնագիր է տալիս

ԲԵՅՐՈՒԹ, ապրիլի 4. - Իսլամ եւ քրիստոնյա նախարարներից կազմված լիբանանյան կաբինետի անդամներն այսօր Պաղեստինի ազատագրության կազմակերպությունից (ՊԱԿ) պահանջեցին մինչեւ ընթացիկ ամսվա ավարտը գինաթափել իր հազարավոր մարտիկներին, որոնք 1970-ականներից ի վեր գտնվում են երկրի տարբեր շրջաններում, ստեղծելով «պետություն պետության մեջ»:

Նախարարներից Նեբիհ Բըրրին (շիա), պաշտպանության նախարար Միշել Մըրը (հույն-ուղղափառ), ներքին գործերի նախարար Սամի Խաթիբը (սունի) եւ ուրիշներ, պատասխանելով ՊԱԿ-ի ղեկավարներից Սաիդ Ուեհբեի կողմից մի քանի օր առաջ եղած այն հայտարարությանը, թե լիբանանյան իշխանությունների կողմից մինչեւ ապրիլի վերջը զինված բոլոր ջոկատների լուծարվելու հրահանգն իրենց չի վերաբերում, հայտարարեցին, թե այսուհետեւ պաղեստինցիներին չի թույլատրվելու դուրս մնալ օրենքի սահմաններից: *«Լիբանանյան քաղաքացիների նկատմամբ կիրառվող օրենքը պետք է կիրառվի նաեւ պաղեստինցիների նկատմամբ»*, ասացին նրանք, իսկ խորհրդարանի նախագահ Հուսեյն Հուսեյնին հայտարարեց, թե *«Լիբանանյան օրենքը առաջին հերթին պետք է կիրառվի դրսեկների նկատմամբ»*:

Իր հերթին պատասխանելով Ուեհբեի մի այլ հայտարարության, *«թե ՊԱԿ-ն իր զենքերի կարիքն ունի Իսրայելի կողմից իր տարածքների վերագրավման նպատակով»*, նախարար Սամի Խաթիբն ընդգծեց, *«Պաղեստինյան զենքը Լիբանանում անցնող 16 տարիների ընթացքում չի կարողացել ոչ մի սանտիմետր հող վերագրավել, հետեւաբար ոչ մի պարագայում չի թույլատրվելու այդ զենքին՝ պետություն պարտադրելու մեր պետության մեջ»*:

Լիբանանում ապրող պաղեստինցի գաղթականների պաշտոնական թիվը համարվում է 372 հազար, իսկ նրանց զինյալ ջոկատների կրակի ուժը գերազանցում է

շարունակությունը՝ էջ 8

Ապրիլի 5-ին, Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի առջեւ բողոք-ցույցի եկան դուրս Նոյեմբերի շրջանի Զորավանի եւ Աշտարակի շրջանի Արուճի տնտեսության գյուղացիները: Դժգոհություն էր հարուցել անարդարացի հողաբաժանումը:

ԱՊՐԻԼԻ 7. ՎԱՂԸ ՏՈՆ Է

Կանանց օրն էլ փոխվեց, կանանց բեռը չփոխվեց...

Լուսանկարը՝ ԼԵՎՈՆ ԱՐՄԵՆԱԿԻՆ

digitised by A.R.A.R.@

ՄԱՌՆԵՈՒԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԸ «ԵՂԲԱՅՐԱԿԱՆ» ԾՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ

Վրաստանի Մառնեուլի շրջանի հայկական լեռնային գյուղերից ամենախոշորը Խոժոռնին է: Լալվարի փեշերին ծվարած այս գյուղը եղել է միջնադարյան բերդաբնակավայր Գուգարքի Ծորփոր գավառում, Բրդաձորից հյուսիս: 11-րդ դարից պատկանել է Զաքարյաններին, եղել է նրանց տոհմական եւ հոգեւոր կենտրոնը: Պահպանվել են միանավ (բլրի վրա) եւ խաչաձեւ՝ զույգ ավանդատներով գմբեթավոր (11-րդ դար) եկեղեցիները:

Այսօր գյուղում ապրում է հայկական 247 ընտանիք (1170 մարդ) եւ ադրբեջանական 68 ընտանիք (263 մարդ), գյուղում ապրում են նաեւ 40 հայախոս հույներ: Միջնակարգ դպրոցում սովորում են 170 հայ եւ 30 ադրբեջանցի երեխաներ:

Այս թվերն, իհարկե, ընթերցողին ոչինչ չեն ասի, եթե նա չիմանա, որ ընդամենը 20 տարի առաջ հայ աշակերտների թիվը դպրոցում եղել է 500, իսկ ադրբեջանցիները ընդամենը մի քանի աշակերտ են ունեցել:

Գյուղի հայ բնակչությունն այն ժամանակ կրկնակի անգամ ավել է եղել այսօրվանից: Սոցիալ-տնտեսական վատ պայմանները, ապրուստի միջոցների սակավությունը տխուր հետեւանքներ են ունեցել գյուղի զարգացման գործում: Վերջին երկու տասնամյակներին գյուղից հեռացել են եւ հիմնականում Հայաստանի մեծ քաղաքներում բնակություն հաստատել 200 խոժոռեցիների ընտանիք:

Լեռնային գյուղերից միատարր հայկական բնակչություն ունեն Ախքյորփի, Ջանախչի, Գյուլաբաղ, Բրդաձոր ու Խորխմել գյուղերը, իսկ սատմական Մոփ գյուղում ադրբեջանցիներն արդեն գերակշռություն են կազմում: Մոփում ադրբեջանական ու ռուսական դպրոցները վերջին տարիներին միջնակարգ են դարձել, իսկ հայկականը մնացել է ութամյա: Եթե Ախքյորփում միջնակարգ, իսկ Ջանախչիում եւ Գյուլաբաղում ութամյա դպրոցները դեռեւս մի կերպ պահպանվում են, ապա ողբալի է վիճակը Խոխմելում եւ Բրդաձորում: Այդ գյուղերում փակվել են դպրոցները: Ներկայիս բնակչության մեծ մասը ծերեր են: Իսկ ժամանակին եղել են շեն եւ աշխույժով լի գյուղեր, ունեցել են ութամյա դպրոցներ:

Շրջանի ղեկավարները մշտապես եղել են ադրբեջանցիներ, անտեսել են հայ բնակչության շահերն ու կենսապայմանների բարելավումը: Մառնեուլի շրջանում այսօր ապրում են մոտ 15 հազար հայեր (բացի վերոհիշյալից, նաեւ Շահումյան եւ Դամյա գյուղերում), եւ 86 հազար ադրբեջանցիներ, որոնց թիվն օր-օրի աճում է:

Հայկական գյուղերի բնակչությունը վերջին երկու տասնամյակներին նվազել է ավելի քան կրկնակի անգամ:

Գյուղերը գազաֆիկացված չեն: Ծանապարհները տեղ-տեղ ասֆալտապատվել են, բայց մեծ մասամբ անբարեկարգ են: Զբնայած Խոժոռնիում շահագործման է հանձնվել հանրախանութի շենքը, բայց վաճառվող ապրանքներ չկան (գյուղարդառը գտնվում է Սաղախլո ադրբեջանական գյուղում): Խոժոռնու մանկապարտեզում ընդամենը 30 երեխա կա: Շենքը զուրկ է տարրական հարմարություններից: Մեծ ջանքերի գնով գյուղերում ավտոմատ հեռախոսակայաններ են տեղադրվել, սակայն դրսի հետ կապ չկա: Նույնիսկ գյուղից գյուղ հնարավոր չէ զանգահարել: Այս ամենին գումարվեց նաեւ շրջափակումը:

Անցած տարվա օգոստոսի 3-ին ադրբեջանական Ախլո գյուղի մոտակայքում թուրք ելուզակները գազանաբար սպանել են 26-ամյա հայ եւ 17-ամյա հույն երիտասարդների, այնուհետեւ հրկիզել նրանց իրենց իսկ ավտոմեքենայի մեջ: Հաջորդ օրվանից իսկ փակվել է Հայաստանից Վրաստան տանող հիմնական ճանապարհը: Վրաստանի Սաղախլո եւ Նոյեմբերյանի շրջանի Բագրատաշեն գյուղերի միջեւ եղած կամուրջը փակել են եւ չեն բացում մինչեւ օրս: Դրանից առաջ Սաղախլոյի թուրքերի կողմից գազանաբար սպանվել էր Մոփ գյուղի բնակիչ, ազգությամբ վրացի 20-ամյա Ռոման Բուռնաձեն:

Այս բոլոր սպանությունների հեղինակները չեն ստացել իրենց արժանի պատիժը: Չէ՞ որ Վրաստանի նախկին կառավարությունը Մոսկվայում պետք է հպարտորեն զեկուցեր, որ իրենց հանրապետությունում հակամարտության պրոբլեմ չկա: Հայկական գյուղերի բնակչությունը մեծ հույսեր էր կապում Վրաստանի նոր դեմոկրատական կառավարության հետ: Սակայն՝ ապարդյուն: Շրջափակումը շարունակվում է: Հայկական գյուղի կապը Հայաստանի հետ կտրված է:

Զարմանալի է եւ տարօրինակ, որ մեր «եղբայրները» թույլ են տալիս թուրքերին՝ տնօրինելու հայերի ճանապարհը փակել-բացելու հարցը, բնակչության համար ըստեղծելով անելանելի վիճակ: Ե՛ւ Նոյեմբերյանի շրջանի ղեկավարության, ե՛ւ հայկական գյուղերի բնակչության բազմաթիվ դիմումները եւ խնդրանքները կամ անպատասխան են մնում շրջանի նոր՝ վրացի ղեկավարության կողմից, կամ, լավագույն դեպքում, հերթական անորոշ խոստումներով են բնեցվում:

«Եղբայրական աջակցության» մի նոր դրսեւորման հետեւանքով էլ մարտի 20-ից չի գործում Թբիլիսի-Սանահին էլեկտրագնացքը: Ասել է, թե շրջափակման օղակը ավելի է նեղանում: Միակ օգնությունը գյուղերին, ցույց է տալիս անցած տարի Երեւանում ստեղծված «Լալվար» բարեգործական միությունը (նախագահ՝ նախկին խոժոռնեցի, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Գառնիկ Վերմիշյան):

Միության ջանքերով հարթեցվում եւ բարեկարգվում է Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախքյորփի-Խոժոռնի-Բրդաձոր ավտոճանապարհը: Այս տարվա հունվարից այդ գծով «Ուրալ» մակնիշի ավտոբուս է աշխատում (ընդամենը 23 տեղով): Վերջերս էլ, «Լալվարի» հայթայթած միջոցներով շարժական էլեկտրակայաններ են ձեռք բերվել եւ տեղադրվել շրջանի հայկական գյուղերում, որոնցում էլեկտրական հոսանքը շատ հաճախակի է անջատվում:

Ի՞նչ ճակատագիր կունենան հայկական գյուղերը, մինչեւ ե՞րբ է շարունակվելու անորոշ վիճակը: Կան սակավաթիվ ընտանիքներ, որոնք իրենց հայրենի գյուղերն են վերադառնում, շենացնում պապենական օջախները(դա իհարկե, այս օրերին իսկական հայրենասիրություն է): Ամեն մի օգնություն ինչ-որ կերպ հույս ու հավատ է ներշնչում: Սակայն բարեգործությամբ հնարավոր չէ ամուր հիմքեր ստեղծել հայկական գյուղերի գոյատեւման համար, որոնք ունեն տասնյակ տարիների պատմական հուշարձաններ ու հարուստ պատմություն:

Ինքնիշխան եւ անկախ հանրապետությունների ձեւավորման այս բարդ ժամանակներում ցանկացած հարց պետական մոտեցում է պահանջում:

Միայն մենք կարող ենք եւ պարտավոր ենք տեր կանգնել մեր պապենական գյուղերին, մշակույթին... եւ վերջապես մեր արժանապատվությանը:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ
մեր սեփ. թղթ.

ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ, ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տնտեսական ճգնաժամից դուրս գալու որոնումները ձեռներեց առանձին շատ անհատների ու խմբերի գործունեությունն ուղղել են դեպի մեր անցյալի արհեստները, ասենք, բրուտագործությունը, շերամապահությունը: Սակայն այդ գրեթե մոռացված արհեստները վերականգնելու համար ժամանակ է պահանջվում, դա ապագայի հարց է: Դառնանք մեր առօրյային: Ամբողջ հանրապետությունում էլեկտրոնային եւ ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունների ձեռնարկությունները կանգնած են կործանման առաջ: Դրանցից գրեթե բոլորը, լինելով միութենական ենթակայության, երբեւէ ինքնուրույն չեն մշակել իրենց տնտեսական ծրագրերը, արտադրել են այն, ինչ պարտադրել է կենտրոնը, ինչ կարողացել են «փախցնել» կենտրոնից: Դրա հետեւանքն է տնտեսության անմխիթար վիճակը: Հորիզոնական եւ ուղղահայաց տնտեսական կապերը խզված են կամ խարխլված: Հանրապետության անկախության ձգտումը սեպ է խրել կենտրոնի եւ մեր միջեւ: Կանգնած ենք փաստի առջեւ. էլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային արդյունաբերության ձեռնարկություններում առկա է գործազրկությունը:

60-ական թվականներին իրենց առաջին քայլերը անող այդ ձեռնարկությունները հետագայում հավաքագրեցին հազարավոր աշխատողների, համալսարանի եւ պոլիտեխնիկական ինստիտուտի մի շարք ֆակուլտետներ հմտացման այդ ձեռնարկությունների համար կադրեր պատրաստելու գործում, նախկին հողագործի կոպիտ ձեռքերը վարժվեցին կատարել նրբագույն տեխնոլոգիական գործողություններ: Թվում էր, թե էկոլոգիապես անվտանգ, էներգաոար արդյունաբերության այդ ճյուղերը այսուհետեւ կդառնան հայերի հիմնական «փեշակը», կմղեն Հայաստանը միջազգային շուկա:

Սակայն իրականում մեկը մյուսի ետեւից փակվում են արտադրամասեր, ձեռնարկություններին կից գիտահետազոտական ինստիտուտներ, փողոց են շպրտվում ինժեներատեխնիկական, բանվորական, սոցիալապես անպաշտպան կադրեր (2-3 ամսվա աշխատավարձի վճարումները ոչ մի գործազուրկի չի կարող փրկել տնտեսական փորձություններից): Ձեռնարկությունները հնչտությամբ կորցնում են դրժվարությամբ ածեցրած կադրերին: Եւ այս ամենը կատարվում է այն դեպքում, երբ ամբողջ հանրապետությունում էլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային սարքերի խիստ պակաս է զգացվում: Ձեռնարկությունների ներկայիս ղեկավարները ըստ երեւույթին ոչ միայն արտաքին, այլեւ հին սովորության իներցիոն շրջափակման մեջ են:

Արդյունաբերության այդ ճյուղերը առաջիկա տարիներին պատմության գիրկը չուղարկելու համար, պետք է շտապ ձեռնարկվեն մի շարք միջոցներ: Գուցե եւ հավաքագրել գործունյա ու բանիմաց մասնագետների, կազմակերպել կառավարությանը կից կարգավիճակ ունեցող կոորդինացիոն խումբ, որի գործը պետք է լինի ի մի բերել հանրապետության ձեռնարկությունների այսօրվա հնարավորությունները, էլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում առաջավոր մտքի, տեխնոլոգիաների ուսումնասիրումը, ներքին եւ արտաքին շուկաների ուսումնասիրումը պատրաստի, վերջնական տեսքով ապրանքի շահավետ վաճառման համար:

ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ինժեներ



Հայաստանի նկարչի տաղը բացվել է **ՌԱՖԻ ԱԴԱԼՅԱՆԻ** ստեղծագործությունների ցուցահանդեսը, որն ընդգրկում է գեղանկարչական, դեկորատիվ եւ գրաֆիկական աշխատանքներ: Քաղաքային բնանկար, նատյուրմորտ, նորինվածք, դիմանկար. ահա նրա գլխավոր ժանրերը՝ իրականացված արդի մտածողությամբ ու հնարքներով: Առանձնահատուկ ուշադրության է արժանի «*Տեսիլքներ. Հայաստան-1988*» նկարաշարը, որի հույզերի խտացումն ու ընդհանրացումը «*Հիշողության դաշտ*» մնծանկարն է: □



ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ

• Կիրովական

ԺԻՐԱՅՐ ՊԵՂԱՆՅԱՆԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Կիրովականում էր գտնվում Ֆրանսիայի Բանյո քաղաքի քաղաքագլխի առաջին տեղակալ Ժիրայր Պեղանյանը: Նա Կիրովական-Բանյո 22-ամյա բարեկամության հիմնադիրներից է: Բազմիցս եղել է մեր քաղաքում, կազմակերպել վերականգնման աշխատանքներին ֆրանսիական այս փոքր քաղաքի մեծածավալ օգնությունը: Այս անգամ նույնպես նա Կիրովական էր ժամանել բարեգործական առաքելությամբ: Բանյոյի քաղաքապետարանը 600 հազար ֆրանկ է նվիրաբերել Կիրովականին: Այդ գումարով ձեռք կբերվեն բուժական սարքավորումներ: Ժ. Պեղանյանը հանդիպում ունեցավ քաղաքի նոր խորհրդի հետ, ճշտվեցին հետագա համագործակցության, փոխհարաբերությունների, տնտեսական ու մշակութային կապերի զարգացման ծրագրերը:

Պեղանյանը եղավ «Տարոն» նորակառույց թաղամասում, այցելեց ֆրանսիացիների կառուցած բուժհամալիրը, մասնակցեց Զատիկի տոնակատարությանը: Նա այցելեց նաեւ Կումայրի եւ Ստեփանավան քաղաքները:

Ստեփանավան

ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հողային բարեփոխումների եւ սեփականաշնորհման գործընթացը հաջողությամբ է իրականացվում շրջանում: Բնակավայրերում ստեղծվել են գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ, որոնցում կամավոր հիմունքներով ընդգրկվել են բնակչության 91 տոկոսը: Սեփականաշնորհման 19 հանձնաժողովներից առավել արդյունավետ են աշխատում Կիրովո, Հոբարձի, Լեջան, Պուշկինո, Ագարակ գյուղերը: Սակայն կան նաեւ դժվարություններ: Համարյա բոլոր տնտեսությունները ամբողջությամբ ապահովված չեն սերմնացուով: Տեխնիկայի մի մասն անսարք է, եղածն էլ չի բավարարում բոլորին: Մտահոգության տեղիք է տալիս որոշ տեղական հանձնաժողովների դանդաղկոտությունը: Դեռեւս լիովին պարզված չեն որոշ գյուղերի տասնյակ բնակիչների կողմնորոշումը, թե ինչ ձեւով է վարելու տնտեսությունը: Այս բոլորով հանդերձ երաշխիքներ կան, որ թերացումները կարճ ժամանակում կճշտվեն եւ շրջանը հաջողությամբ կավարտի այդ դժվարին գործը:

Կամո

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Մարտի 26-ին տեղի ունեցավ հողային բարեփոխումների եւ սեփականաշնորհման Կամոյի շրջանային հանձնաժողովի հերթական նիստը, որը բացեց նրա նախագահ Վ. Հակոբյանը: Վերջինս ներկայացրեց մի շարք թվեր. Բատիկյանում եղած 1059 ծխերից ստացվել է 1033 դիմում, Սարուխանում՝ 2396 ծխից՝ 2282, Հայաքառատում՝ 2700 ծխից՝ 2163 եւ այլն: Հակոբյանը հիշեցրեց, որ առաջնահերթ խնդիրը գյուղատնտեսական աշխատանքներին անթերի նախապատրաստվելն է: ՇԱԱՄ-ի խորհրդի նախագահ Գ. Գրիգորյանին, «Ագրոսերվիս» շրջանային միավորման տնօրեն Ռ. Աղաջանյանին հանձնարարվեց անհրաժեշտ աշխատանքներ տանել տեխնիկայի նորոգման գործում եղած թերությունները, սերմացուի պակասը լրացնելու ուղղությամբ:

Մարտունի

«ԼԻԾՔԸ» ՎԵՐԵԼՔ Է ԱՊՐՈՒՄ

Մարտունիում է գտնվում «Լիճք» հանքային ջրերի գործարանը: Այն այժմ աշխատում է վարձակալական եղանակով: Ընթացիկ տարվա անցած ժամանակամիջոցում արտադրվել է 1 միլիոն 200 հազար շիշ հանքային ջուր, նույնքան էլ՝ լիմոնադ: Հանրապետության եւ Միության տարբեր քաղաքների կոոպերատիվ կազմակերպությունների եւ գործարանների հետ կնքված նոր պայմանագրերը նպաստել են մատակարարման եւ արտադրանքի իրացման գործի բարելավմանը: Այս ամենի հետ կապված՝ կրկնապատկվել է յուրաքանչյուր աշխատողի վարձատրության չափը:

Սեւան

ԳՈՐԾԱՐԱՆԸ՝ ԽՆԱՄԱԿԱԼ

Աշխատանքային կոլեկտիվի եւ արհմիութենական կազմակերպության համատեղ որոշմամբ մայիս ամսից սկսած Սեւան քաղաքի բոլոր առաջին կարգի հաշմանդամների խնամակալությունը իր վրա է վերցրել ծխախոտի ֆերմենտացիոն գործարանը: Այդ նպատակով ձեռնարկության օգուտներից կազմվել է առանձին ֆոնդ:

digitised by A.R.A.R.@

Սփյուռքը պետք ունի նորացման, ըմբռնումների, նպատակների, գործելաձեւի ու հարաբերությունների արդիականացման: Փոխվել են ժամանակները, սերունդները: Փոխվել եւ փոխվում է սփյուռքի քարտեզը: Փոխվել է ամենագլխավորը՝ մայր երկրի դրվածքը, պետականությունը, ձգտումները: Փոխվում են նաեւ մեր ժողովրդի մայր հատվածի ազգային, ընկերային (սոցիալական) ու տնտեսական ներքին հարաբերությունները, մյուս հատվածների հետ նրա առնչությունների ձեւն ու բովանդակությունը: Բացվել է հնարավորությունների նոր ասպարեզ: Եւ, բնականաբար, պետք է փոխվի սփյուռքը, գլխավորությամբ նրա կյանքը վարող կուսակցությունների եւ այլ կազմակերպությունների, որոնք ժամանակն է, որ ինքնաքննադատաբար մոտենան իրենց անցյալի գործունեությանը, զերծ՝ բոլոր տեսակի բարդույթներից:

Ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածը, հակառակ իր մի շարք մակերեսային եւ խիստ կտրուկ դրույթներին, ուշագրավ փորձ է անդրադառնալու այդ կարեւոր պահանջին, այն դիտելով իբրեւ արդեն իսկ սկսված գործընթաց:

Խ.Հ.

ՍՓՅՈՒՌՔԸ ՆՈՐԱՅՍԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏՅԱՆ

Մեր կազմակերպությունների գործունեության եւ ընդհանրապես արժեքների գնահատման չափանիշների ապակայունացման գործոններից մեկը պետք է համարել ա՛յն փոփոխությունը, որ տեղի է ունենում Միջին Արեւելքի, Եւրոպայի եւ Հյուսիսային Ամերիկայի հայկական համայնքներում:

Հետցեղասպանության շրջանի սփյուռքահայությունը, սկզբնական շրջանում հատկապես, խորը կարիք ուներ հաստատելու իր հավաքական գոյությունը եւ մշակութային ինքնությունը: Սա ցեղասպանության պատճառած արհավիրքների բնական հակազդեցությունն էր եւ բոլորովին չէր կարոտում բացատրության: Այդ գործում ներգրավված լինելն անգամ ինքնին վարձատրություն էր համարվում, իսկ ջանքերի եւ միջոցների վատնումը, հանուն մշակույթի պահպանման, ինքնության հաստատման եւ հայկական դատի հետապնդման՝ (որոշ իմաստով այս բոլորը նույնանում էին) ինքնարդարացման միջոց: Հաջողությունը չափվում էր ծախված միջոցների քանակով եւ ոչ թե վերջնական արդյունքներով: Կարեւորը «գործի վրա» լինելն էր:

Գործունեությունը առաջ էր տարվում կազմակերպությունների միջոցով, որոնք մերձեցման, ազգակցական կենտրոններ էին: Ցեղասպանության կորուստներն այնպիսի՛, էին, որ յուրաքանչյուր գիտակից անհատ կփորձեր դառնալ ազգի մարմնացումը: Ազգի գոյատեւումը ապահովված էր համարվում, երբ ազգ հասկացողությունը հավասարեցվում էր մոտիկից ընդելուզված ընտանիքի (որտեղ գուցե եւ կլինեին անհամաձայնություններ) կամ էլ մի որեւէ ակումբի (որտեղ խմբական շահերը վեր էին դասվում ամեն տեսակի բանավեճերից): Այսպիսով ազգը փաստորեն դառնում էր ընդլայնված մի ընտանիք:

Պետք է խոստովանել, որ այն, ինչ արվում էր սփյուռքում, օգտակար էր, հաճախ նաեւ ոգեշնչող: Սակայն սա չի նշանակում, թե ամեն ինչ գերազանց էր եւ թերություններ չկային: Սա չի նշանակում նույնպես, թե ամենալավ համակարգերն անգամ չեն կարող ինքնագործ խմբակցությունների չվերածվել եւ այդպիսով բացասական դեր խաղալ, եթե ժամանակին չվերակազմակերպվեն եւ չհամաձայնեցվեն (կամ չհամապատասխանեցվեն) նոր պայմանների ոգուն: Առանց այն էլ բանկ ենք վճարել ռեֆլեքսային մոտեցում ցուցաբերելով այդ գործին եւ հաճախ շփոթելով մեր կատարածը ծրագրավորված գործունեություն հասկացության հետ:

Եկեք ընդունենք, որ հատկապես Օսմանյան կայսրության հարեւանությամբ գտնվող գաղութներում, ժամանակի ընթացքում սկսեցինք իդեալական համարել հայերին բնութագրող ոչ-քաղաքական «միլլեթ» հասկացողությունը: Միջին Արեւելքում ստեղծված կազմակերպությունները սկսեցին սահմանել, թե ինչ բան էր Հայ դատը, ով եւ ինչպես պետք է այն հետապնդեր եւ այլն: Մինչդեռ Հյուսիսային Ամերիկայի համայնքները, որոնք անկարող այդ գերիշխում էր կազմակերպությունների մեծամասնության մտածողության եւ գործունեության մեջ: Դպրոցի բացումը եկավ քաջալերելու այն նոր մտածողությունը, որն անհրաժեշտ էր համարում հաշվի առնել Արեւմուտքի հայկական համայնքների առանձնահատուկ կարիքները, եւ այդ համայնքներին ներգրավել մշակութային եւ քաղաքական նպատակների հետապնդման գործընթացի մեջ:

Այս նոր մտածողությունը, որն ըստ էության շրջանում թույլ էր, գնալով ուժեղացավ: Հյուսիսային Ամերիկայի հայկական համայնքները ձեռք բերեցին ինքնավստահություն, հատկապես այն բանից հետո, երբ պարզվեց, որ Միջին Արեւելքի գաղութներն ունեին իրենց հատուկ թերությունները:

Պետական ամուր կառուցվածքի բացակայումը Լիբանանում, օրինակ, որն այնտեղ գործող հայկական համայնքին արտասովոր վիճակ եւ խուսանավելու հնարավորություն էր ընձեռել, պատճառ դարձավ, որ Լիբանանը զոհ դառնա պատմության ամենաերկար եւ ամենաանողոք քաղաքացիական պատերազմներից մեկի արհավիրքներին: Այդ կառուցվածքի բացակայությունը միաժամանակ արգելք հանդիսացավ, որ Լիբանանի կառավարությունը հետամուտ լիներ հայկական դատին, հակառակ այն փաստին, որ հայերի թիվը մեծ էր երկրում եւ նրանցից ոմանք նույնիսկ ընդգրկված էին երկրի խորհրդարանի կազմում:

Մեզ համար պարզ դարձավ, որ սփյուռքահայ կյանքի մշակութային եւ կազմակերպչական մեր «տիպական» պատկերացումները այնպիսի մի վայրում էին «խարիսխ գցել», որ առնվազն անկայուն էր, քիչ էր առնչվում մեզ հուզող հարցերի բնույթի հետ եւ որի քաղաքականության ըմբռնումը «խեղդվում» էր երկրում ապրող փոքրամասնությունների կրոնա-ազգամիջյան հոգեբանության խառնաշփոթի մեջ:

Անհրաժեշտ է նկատել, որ նույնիսկ երբ Իրանում իր ավարտին հասնի հեղափոխական հանգրվանը, Լիբանանում՝ քաղաքացիական պատերազմը, Մոցի պատերազմը, սփյուռքահայ աշխարհը չի կարող վերադառնալ 1950-60-ական թվականների իդեալականացված պատկերներին:

Միջին Արեւելքից արտագաղթը միշտ էլ գոյություն ունեցել է: Այն մեծապես աճել է ճգնաժամի եւ կատաղի անկումների ժամանակահատվածներում: Վերջին շրջանում առավելապես անկում են ապրում սփյուռքում գործող ներկա հաստատությունները, արժեքների համակարգը, ղեկավարությունը: Սակայն առայժմ չկա մի նոր մտածողություն, որ գար փոխարինելու այդ ամենին: Դեպի արեւմուտք հոսքը պարզապես մեր հրատապ հարցերը մի վայրից մեկ ուրիշ վայր տեղափոխելու դերն է կատարում:

Մենք պետք է նաեւ քննադատաբար մոտենանք վերը նշված աշխատանքի տեղաբաշխման խնդրի երկրորդ մասին: ԱՄՆ-ի տնտեսությունը անկումային վիճակում է: Այն կարող է վերածվել ճգնաժամի: Վերականգնումը ամբողջական կարող է չլինել: Սա նշանակում է, որ սփյուռքահայ կազմակերպությունները ֆինանսավորելու հարցը անհրաժեշտ է վերանայել:

Մտածողության փոփոխություն, իհարկե, կարելի է կատարել, սակայն այն չպետք է նշանակի պարզապես կոմպյուտերային տեխնիկայի ներդրում՝ այս կամ այն հիմնարկում, ոչ էլ գոռանալ նոր ղեկավարությամբ կամ էլ արեւմուտքում ծնված սփյուռքյան ղեկավարությամբ: Նոր մտածողությունը պետք է առաջանա ոեալ պրոբլեմների ճիշտ գնահատումից, նոր հարցերի առաջադրումից, նպատակին հասնելու հասարակական լուրջ բանավեճերից եւ, մանավանդ, ոչումներ ընդունելու ռամկավարական գործընթացից: Տեխնոլոգիա կարելի է գնել, տեսեք Իրաքը: Մենդավայրը սփյուռքահայի համար արկած է, որի անպատեհությունները կարելի է գտնել ու գերազանցել գիտակից աշխատանքով եւ որի առավելությունները կարելի է վատնել իշխանության փափագի հիվանդագին մղումով:

Սփյուռքը ներկայի եւ սպագայի հետ առնչվող լուրջ խնդիրներ ունի, որոնք պետք է կարողանա լուծել նախքան նորացող Հայաստանի գոյության հետ դեմ հանդիման գալը:

Ի՞նչ է սպասում Միջին Արեւելքի համայնքներին:

Իրաք-քուվեյթյան ճգնաժամը ինչպե՞ս է անդրադառնալու դրանց վրա:

Ինչպե՞ս ենք մենք դիմակայելու հնարավոր տնտեսական ճգնաժամ Ամերիկայում:

Ինչպե՞ս ենք մենք պատրաստվում հարմարվել Եւրոպայում եւ Ասիայում տեղի ունեցող ազգերի զարթոնքին:

Ի՞նչ ազդեցություն են թողնում այդ վերափոխումները մեր կազմակերպությունների եւ ընդհանրապես գաղութների վրա:

Եւ, վերջապես, ինչպիսի՞ փոփոխությունների պետք է ենթարկվեն այս վերջինները, որպեսզի կարողանան դիմակայել ապագան:

Մեր կազմակերպված գաղութներում գործունեության ծրագրերը հիմնված են հակազդեցության օրինաչափության վրա: Հաջողությունն այնտեղ պայմանավորված է խորհրդանիշերի կամ խորհրդանշական գործողությունների ուժգնությամբ:

Ինչպե՞ս ենք մենք պատրաստվում հարատեւելու մի աշխարհում, որտեղ մեր նոր սերունդը անգամ մեզանից պահանջում է այնպիսի նպատակների հետապնդում, որոնք իրագործելի լինեն եւ համապատասխանեն մեր իրական կարիքներին ու շահերին: Առաջին հերթին, մեր կարծիքով, մենք պետք է հրաժարվենք Զուլումի վախից: Չպետք է այն դարձնենք մտասեւեռում կամ մեր ազգավարության հիմնական գործոնը: Մինչեւ այժմ այդ վախը մեզ պարզապես առաջնորդել է դեպի մշակութային լճացում եւ մտավորական ամլություն, առաջ բերելով այնպիսի պրոբլեմներ, որոնց դեմ էլ նախատեսված էր մեր պայքարը: Դեռ ավելին, այն դարձել է այնպիսի մի օրինաչափություն, որին հետեւելով մեր կազմակերպությունները կարողացել են ավելի շատ հայերի «կորցնել», քան «փրկել»:

ԱՄ. նուսկար

Հայաստան, գրում եմ քո անունը

Gerard Bedrossian et Nicole Priollaud

Armenie, j'ecris ton nom

Ֆրանսայի եւ Հայաստանի, աւելի ճիշդ Ֆրանսայիներու եւ հայերու դարաւոր յարաբերութիւններու եւ փոխանակութիւններու, ճամբորդութիւններու եւ այցելութիւններու առիթներով նետուած կամուրջներու, ստեղծուած համակրութիւններու եւ բարեկամութիւններու, հաստատուած կապերու, նաեւ ճակատագրական շրջաններու եւ դէպքերու պատմութիւնները վերագծող շահեկան հատոր մը:

Վկայութիւններ, տեղեկագրեր, ճամբորդութեան տպաւորութիւններ, օրագիրներ, նամակներ, ճառեր, յօդուածներ կը ներկայացնեն Հայաստանը իր պատմութեան եւ քաղաքակրթութեան յատկանշական ժամանակաշրջաններուն: Այլ խօսքով, հետքեր, որոնք կը յիշեցնեն, կը վկայեն, կը փաստեն, կը պատկերացնեն Հայաստանը: Հայաստանը իր նախապատմութեան եւ նախաքրիստոնէական շրջանի աւանդութիւններով, Հայաստանը հաւատքի իր խաչակրութիւններով, Հայաստանը իր մտքի եւ գրչի ասպետներով, Հայաստանը իր վաճառականներով, Հայաստանը իր ողբերգութիւններով եւ կոհերով, Հայաստանը իր փշրանքներով:

Հայագէտ Անտուան Ժան-Սէն Մարտէն Հայաստանի վրայ իր պատմական աշխարհագրական յուշերուն մէջ (1818) կը դնէ Արարատը իր նախապատմական դերին մէջ: Պարսիկ, յոյն, հռոմէացի պատմաբանները կը յիշեն Հայաստանը եւ իր առաջին ու նշանաւոր թագաւորները: Գրէգուար Դը Տուր կը բերէ առաջին վկայութիւնները քրիստոնեայ Հայաստանի, ապա Հայթոն, Գիյօմ Դը Ռիւբրուք կը բացատրեն խաչակիրներու հետ ստեղծուած կապերը, արեւելեան կապերը: Մարկո Պոլօ, Ժոկէֆ Պիթոն Դը Տուրֆոս եւ եւ Ժան Բատիստ Տաւէռնիէ կը գովեն հայ վաճառականներու ճառագայթումը արեւմուտքի մէջ եւ յատկապէս անոնց հաստատման համար Ռիշլիէօյի, Կոլբէռի ընծայած դիւրութիւնները, առանց մոռնալու Ժան Ալտէն եւ տորոմի արտադրութիւնը:

«Ինչպէ՞ս կարելի է հայ ըլլալ» խորագրին տակ, ուղեւորներ կը նկարագրեն հայկական բարքերը՝ մկրտութիւն, պսակ, յուղարկաւորութիւն, սեղանները, շուկաները, կգեստները, արեւմտեան հակումները եւ կեանքի այլ երեւոյթներ: Ապա, սուրճին ներածումը Ֆրանսա, 1672-ին, Պասկալ կոչուած հայու մը կողմէ, 1777-ին, Վիրոֆլէի մէջ Շամաս անունով ուրիշ հայ մը կը բանայ արեւելեան բաղնիքներու առաջին հաստատութիւնը եւ տարագիր մը Արամ անունով 1920-ական թուականներուն Ֆրանսայիներուն կը ճանչցնէ մածունը:

Յետոյ, «Սուրբ եւ գրիչը» գլուխի մը մէջ հռչակաւոր անձեր՝ Լուդովիկոս ԺԳ. թագաւորը, Մոնտէսքիէօ, Ա. Դը Լամարտին, Վ. Հիւգօ, Ժորժ Սանդ եւ ուրիշներ կը հետաքրքրուին հայերով: Իսրայէլ Օրի կը ձեռնարկէ իր խաչակրութեան:

Վերջին մասին մէջ, կը գտնենք «Պրօ Արմէնիա»-ի շուրջ համախմբուած ծանօթ հայասէր անուններ՝ Ժ. Ժօրէս, Ժ. Կլեմանսօ, Ա. Ֆրանս, Պ. Կիյառ իրենց հայանպաստ դիրքորոշումներով, բայց նաեւ ներկայ են Պ. Լոտի, Գ. Ֆառռէ, Պ. Բընուա եւ Լուութեան ձայները:

Ժ. Պետրոսեան եւ Ն. Պրիոլոյի այս գործը մեծ առաւելութիւնն ունի ամփոփելու նոյն հատորի մը մէջ՝ հոս ու հոն դրուած կամ ըսուած խօսքեր, իրադարձութիւններ: Թէպէտ լրիւ ըլլալ կարելի չէ ընտրութիւն մը անհրաժեշտ է, եւ հեղինակներուն ըրած ընտրութիւնը բաւական բացայայտ է եւ կուտայ գաղափար մը հայերու երբեմն կոյր հաւատքին Ֆրանսայի վրայ: Մէջբերումներն ու յիշատակութիւնները կը մատնեն արուեստակեալ լեկու մը: Ցոյց կուտան մօտեցումներ, բայց նաեւ անտեսումներ: Կ՚արտայայտեն յոյսեր, բայց նաեւ կը մատնանշեն վէրքեր:

Համադրութեան գնահատելի աշխատանք մըն է: Գիրք մը, որ շատ մը նիւթերու համար կրնայ առիթ տալ հետաքրքրական ընդլայնումներու: Վկայութիւններու գիրք մը, որ կը հետեւի ժամանակագրութեան մը եւ պատմութիւններով կը փորձէ ներկայացնել պատմութիւն մը:

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ, «Ցառաջ»

digitised by A.R.A.R.@

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՄԱՏԱՒՈՐՄԱՆ ԲԱՂՁԱՆՔՈՎ

ՅՈՎԻԿ ԷՕՐՏԷՔԵԱՆ

Հայ ազատագրական շարժման օրինաչափ արդիւնք էր հայ քաղաքական կուսակցութիւններու գոյաւումը: Անոնք 19-րդ դարու վերջերուն հրապարակ իջան ազատագրելու համար Օսմանեան լուծին տակ գտնուող պատմական Հայաստանի հողերը, կամ նուազագոյնը՝ ինքնավարութեամբ արժանավայել կեանքի իրաւունք ձեռք ձգելու: Հայ առաջին՝ Արմենական կուսակցութիւնը, հիմնուելով պատմական Հայաստանի հողին վրայ, լաւագոյն գործելակերպը որդեգրեց. իրատեսութիւն, չափաւորութիւն ու խոհեմութիւն, առանց յախուռն ու ցուցարարական ելոյթներու: Արմենականները լաւապէս կը ճանչնային արեւմտահայութիւնն ու անոր հարցերը, մինչ ուրիշներ՝ արտաքին ազդեցութիւններով եւ ընկերային անժամանակ ու խորթ գաղափարախօսութիւններոգվ կ'ուզէին յեղափոխութիւն առաջացնել Արեւմտահայաստանի մէջ:

Հայ ազատագրական շարժման իրենց անմնացորդ նուիրումով ու խիզախութեամբ, Արմենականները հարստացուցին մեր ազատամարտի էջերը, որոնք միւս կուսակցութիւններու կատարածին հետ միասին կազմեցին հայ զէնքին փառքն ու պատիւը:

Արմենականները 1921-ին միացան Պոլսոյ մէջ հիմնադրուած Ռամկավար Ազատական կուսակցութեան, իրենց հետ ունենալով Սահմանադիրները: Վերակազմեալ Հնչակեանները, ժողովրդականները եւ այլ ազգայնական հոսանքներ: Միացման նպատակը մէկն էր. ուժերու համախմբում՝ վասրն ազգային իղձերու իրականացման, իսկ միացման հասարակ յայտարարը՝ իրատեսութիւն, ազգային ընդհանրական նպատակներու գերիվերութիւն դասակարգային մօտեցումներէ, եւ, վերջապէս, սփիւռքի ձեւաւորման հետ կապուած նոր պահանջներու բաւարարում:

Այսպիսով, ՌԱԿ-ը փաստօրէն ժառանգորդն է հայ առաջին՝ հայրենիքին կուսակցութեան, միեւնոյն ժամանակ հանդիսանալով սփիւռքեան իրականութեան ծնունդ: Բայց ՌԱԿ-ի ծնունդը նախեւառաջ տակաւին Գրիգոր Արծրունիէն աւանդած ազատական (լիբերալ) եւ ռամկավարական (ժողովրդավարական) մտածողութեան դրրսեւորումն էր: Մտածողութիւն, որուն լաւագոյն կրողները եղան հոյլ մը մտաւորականներ եւ հայ գրականութեան սպասաւորներ: Մտածողութիւն մը, որուն պարտականութիւնն էր ժողովուրդը դասակարգերու բաժնող մարդոց ըսածներուն ու ըրածներուն հակատրամաբանութիւնը ապացուցանել: ՌԱԿ-ը հրապարակ կ'իջնէր այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ ձեւաւորումի մէջ էր Սփիւռքը, երբ կը խորհրդայնանար Հայաստան: Պէտք էր կազմակերպել ազգային-եկեղեցական կառոյցները Սփիւռքի մէջ: Եւ տակաւին պէտք էր դիրք ճշդել խորհրդային կարգերուն հանդէպ:

Ռամկավար Ազատական կուսակցութիւնը, քաղաքական միւս ուժերուն հետ միասին, կազմակերպեց սփիւռքեան կառոյցները, մէ՛կ տարբերութեամբ միայն. ան իր գաղափարախօսութեան հաւատարիմ, մշտապէս պահանջեց, որ այդ կառոյցներուն մէջ իրականացուին ժողովրդավարական սկզբունքները եւ վերջ տրուին մենատիրական ձգտումներուն:

Խորհրդային կարգերու նկատմամբ ՌԱԿ-ի կեցուածքը, բնականաբար, զգայուն կէտ մնաց երկար ատեն: Սոցիալիզմն ու ամբողջատիրութիւնը մերժող ՌԱԿ-ը կը հանդուրժէր խորհրդային կարգերը, կը շեշտե՛նք, կը հանդուրժէր եւ ո՛չ թէ ստրկամտաբար կը ջատագովէր, ինչպէս կ'ուզեն ներկայացնել որոշ չարամիտներ: Այդ կեցուածքը աւելի ազգային էր, քան քաղաքական: ՌԱԿ-ը չէր կրնար ողջ սփիւռքահայութիւնը հակադրել Հայաստանին, պարզապէս անոր համար որ հոն դրօշը կարմիր է: ՌԱԿ-ը, ինչպէս որեւէ կազմակերպութիւն, որ համոզմունքը էր եւ ոմանց համար *պարադոքս* մնաց երկար ատեն: Սոցիալիզմն ու ամբողջատիրութիւնը մերժող ՌԱԿ-ը կը հանդուրժէր խորհրդային կարգերը, կը շեշտե՛նք, կը հանդուրժէր եւ ո՛չ թէ ստրկամտաբար կը ջատագովէր, ինչպէս կ'ուզեն ներկայացնել որոշ չարամիտներ: Այդ կեցուածքը աւելի ազգային էր, քան քաղաքական: ՌԱԿ-ը չէր կրնար ողջ սփիւռքահայութիւնը հակադրել Հայաստանին, պարզապէս անոր համար որ հոն դրօշը կարմիր է: ՌԱԿ-ը, ինչպէս որեւէ կազմակերպութիւն, որ համոզուած էր Սփիւռք-հայրենիք յարաբերութեանց անհրաժեշտութեան, պարզապէս ստիպուած էր հաշուի առնել Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող իշխանութիւնը, այսուհանդերձ բացառելով Խ. Հայաստանի հետ յարաբերութիւնները Մոսկուայի միջոցով վարելու միտքն անգամ:

Մենք խորապէս համոզուած էինք ու ե՛նք, որ վարչածեւերն ու խորհրդանիշները գնայուն են, մնայուն ու յաւերժական է հայրենիքն ու հայութիւնը: Մենք կը հաւատայինք եւ այսօր ալ նոյն հաւատքը ունինք, որ հայրենիքի մէջ քաղաքական փոփոխութիւններ կատարելու իրաւունքը բացառապէս հայրենի հայութեան կը պատկանի եւ որ դուրսէն ոչ ոք կրնայ անոր ճակատագիրը տնօրինել: Պիտի խոստովանիլ, որ մեր այս կեցուածքը շատ սուղ արժեց մեր վրայ: Ամբաստանուեցանք եւ՛ ձախէն, ե՛ւ աջէն, մերթ իբրեւ խորհրդային կարգերու ջատագով, մերթ իբրեւ արեւմուտքի իմպերիալիստական շրջանակներու կարկառուն ներկայացուցիչ: Ինչեւէ, պատմութիւնը, եւ միայն պատմութիւնը պիտի որոշեն իրաքանչիւրին կատարածն ու կատարածին ճշմարտացիութիւնը:

Հիմա նոր դարաշրջան մը բացուած է: Հայաստանի Հանրապետութիւնը հռչակած է անկախութեան գործընթացի սկիզբը: Ժողովրդավարական ուժերը յաղթանակած են: Հիմա իրաքանչիւրին պարտքն է առանձին մէկ կողմ դնել տարակարծութիւնները եւ ամէն ճիգ կեդրոնացնել նոր պետականութեան ամրապնդման, որմէ աւելի վեհ գործ չկայ այսօր:

Ռամկավար ազատական կուսակցութիւնը իր ամբողջական նեցուկը արտայայտեց Հայաստանի նոր իշխանութիւններուն: Մենք մեր կարելին պիտի ընենք Հայաստանի վերաշինութեան ու տնտեսական հզօրացման համար: Ռամկավար Ազատական կուսակցութիւնը իսկապէս կը յուսայ, որ ժողովրդավարութիւնը օրըստօրէ կ'արմատաւորուի Հայաստանի մէջ եւ լաւագոյն նախադրեալներ կը ստեղծուին բազմակարծութեան ու բազմակուսակցութեան համար: Մեր կուսակցութիւնը, Հայաստան վերադառնալու պարագային, պիտի ուզէր ժողովրդավարական իր կենսափորձը փոխանցել նաեւ հայրենի հայութեան, եւ, այո՛, ընել նաեւ որ այլեւս յոգնած ենք յեղափոխութիւններէն եւ յեղափոխականներէն, սոցիալիզմէն ու սոցիալիստներէն, ժամն է արդէն ստեղծելու ազատ հասարակարգ եւ ազատական տնտեսութիւն, ուր բոլորը կրնան մրցիլ բարիք ստեղծելով ամենուրեք եւ կերտելով հզօր, բարգաւաճ եւ անկախ Հայաստան: □

Անդրանիկ Կռանեան, «ՄԱՍԻՍ»

ՅՅԴ ընդդէմ ՀՀՇի. լիբանանացո՞ւմ...



Կ'ուզենք հոս լայն փակագիծ մը բանալ Հայոց Համազգային Շարժումին (ՀՀՇ) եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՅՅԴ) փոխյարաբերութիւններուն մասին, անկախաբար այդ միւս կէտէն, որ նիւթ պիտի հայթայթէ յաջորդ թղթածրարի մը եւ որ կը վերաբերի Հայաստանի եւ Սփիւռքի կուսակցութիւններուն փոխյարաբերութեանց:

Երկու գերակշիռ ուժեր՝ Հայաստանի իշխանութեան տիրանալու պայքարը կը մղեն այսօր: Մէկ կողմէն՝ ՀՀՇն, Հայաստանի գերակշիռ ուժը, միւս կողմէն՝ ՅՅԴն, Սփիւռքի գերակշիռ կուսակցութիւնը:

Պայքարը՝ Հայաստան-Սփիւռք մենամարտի բնոյթ չունի տակաւին: ՀՀՇի եւ ՅՅԴի միջեւ այս հակամարտութիւնը կերպով մը կը յիշեցնէ Պոլսոյ «Գրաբարեան եւ աշխարհաբարեան» հակամարտութիւնը:

Հայաստանի հողին վրայ, վերջին 70 տարիներուն ընթացքին, տարբեր հոգեբանութեամբ եւ տարբեր պայմաններու մէջ կարգացած քաղաքական մտածողութիւն մը կայ, որ կը փափաքի իր ըմբռնած ձեւով վարել նոր Հայաստանին դեկը, ձեռնարկել նոր փորձարկութեան մը, մերժել անցեալի կրկնութիւնները: Ասիկա ՀՀՇն է:

Իսկ ՅՅԴն նոր Հայաստանը կը նկատէ ժառանգ մը, որ կուգայ իր անցեալի պատմութենէն, որպէս շարունակութիւնը իր անցեալին, կամ Վ. Փափազեանի խօսքով՝ «աւագ եղբայրը» Հայաստանին (*Ազդակ*, 20-10-1990): Որպէս այդպիսին, ՅՅԴն կ'ակնկալէր Հայաստանի մէջ գրկաբաց ու յաղթական ընդունելութիւն մը: Բայց հոն արդէն արմատացած ՀՀՇի ընդդիմութեան պատճառով, ՅՅԴն հարկադրուեցաւ ճակատ բանալ քաղաքական ճամբով գրաւելու իշխանութիւնը:

Ներկայացող առաջին առիթը՝ Հայաստանի նախագահական ընտրութիւններն էին: ՀՀՇի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի դէմ ՅՅԴն փորձեց գործածել համայնավար Վլադիմիր Մովսիսեանը: ՅՅԴն նախընտրեց կինակցիլ համայնավարութեան հետ եւ հակադրուիլ ՀՀՇին, այն ինքնատիպ պատճառով, որ ՀՀՇն՝ իր գաղափարներով աւելի մօտ էր ՅՅԴին, հետեւաբար երկուքէն մէկը աւելորդ կը դառնար, քանի որ կարելի չէր երկու աքլոր պահել նոյն հաւնոցին մէջ:

Եթէ նախագահական ընտրութիւններուն՝ ՅՅԴն յաջողէր ՀՀՇն դուրս նետել մրցոյթէն, յաջորդ հանգրուանով հեշտ պիտի ըլլար ներգրաւել Հայաստանի Համայնավար կուսակցութիւնը, շնորհիւ ՅՅԴի մշակած արտասահմանեան կապերուն Ամերիկայի հետ, որոնք առնչուած են նաեւ Գորբաչով-Բուշ ներկայ բարեկամութեան հետ:

ՀՀՇն, ՅՅԴի բաղդատած, «տեղացի» ըլլալու առաւելութիւնն ունէր: Ան Հայաստանի ժողովուրդէն պաշտուած էր, յատկապէս Ղարաբաղի հարցով անոր մղած պայքարին ու ապրած բանտարկութեան համար. «*Դուն ո՞ւր էիր, ո՞վ ՅՅԴ, երբ մենք բանտերը կը մտնէինք*», կրնայ հարց տալ:

Նախագահական ընտրութեանց ծախող պայքարէն ետք, ՅՅԴն ներկայիս կը փորձէ ՀՀՇին դէմ օգտագործել Ղարաբաղի հարցը, լծակ մը, որ ծառայած էր ՀՀՇին՝ իշխանութեան գլուխ հասնելու:

ՀՀՇ-ՅՅԴ այս լարուածութեան հետեւանքը կը գտնենք այն վերապահութեան մէջ, զոր Հայաստան կը սնուցանէ Սփիւռքին եւ անոր կուսակցութիւններուն երկարած օգնութեան բաղուկին դէմ:

«*Ուրբաթ*» շաբաթաթերթի հարցազրոյցին մասնակցած ՅՅԴի ներկայացուցիչը կը պարզէ երկու ճակատները, որոնց մէջէն ՅՅԴն կը յուսայ ճեղք բանալ ՀՀՇի բերդէն ներս: Առաջինը արդէն ըսինք, Ղարաբաղի հարցն է, «*որուն սպառնացող մահացու վտանգին դիմաց, առ այժմ չի ձեռնարկուիր համապատասխան միջոցառումներու*»: Երկրորդ հարցը՝ Հայ Դատի հետապնդման հարցն է:

Հրայր Մարուխեան, «*Դրօշակ*»ին տուած իր հարցազրոյցին մէջ, կը բնորոշէ. «*Հայրենի մեր ժողովուրդին ճակատագիրը՝ միայն մէկ հոսանքի տնօրինութեան վստահիլը (...) մենատիրական նոր կարելիութիւններու տուն տալու չափ վտանգաւոր է*»: «*ՀՀՇի անդամները անտարակոյս նոյն ազգային գիտակցութիւնն ունեն ինչ որ մենք: Մեկ բաժնողը՝ քաղաքական ուղղութիւնն է*»:

Վ. Փափազեանի հաշտարար կեցուածքին հակադրուելով (*Ազդակ*, 20-10-1990), Նպարտէթ Պէրպէրեան, Վ. Մովսիսեանի պարտութեան դառնութիւնը ամիսներ ետք մակերեսելով կ'ըսէ: «*Հայրենի հանրութիւնը դեռ չէ ըսած իր վերջին խօսքը, մանաւանդ որ դեռ վճռուած չէ հայրենի քաղաքական ուժերուն դասաւորման պատկերը*» (*Ազդակ*, 3-11-1990): Հ. Մարուխեանի համար, թէեւ այսօր ՀՀՇն հասած է Հայաստանի պետութեան գլուխը, սակայն յոյս կայ, որ օր մը «*Արտերկրի քաղաքական շրջանակներու*» (Ամերիկայի՞) օժանդակութեամբ, ՅՅԴն հասնի Հայաստանի իշխանութեան գլուխը:

ՀՀՇ-ՅՅԴ հակադրութիւնը կը կօրէ Մոսկուայի հետ գործակցելու անոնց քաղաքականութեանց շուրջ եւս: Գորբաչովի մեծագոյն կինակիցը՝ Սովետ Միութիւնը չէ՛, այլ Ամերիկա՛ն: ՅՅԴ եւս, հետեւելով Ամերիկայի օրինակին, թիկունք կը կանգնի Գորբաչովին եւ անոր վարած կեդրոնական իշխանութեան: Բացի Ամերիկայի հետ իր վաղեմի կապերէն, ՅՅԴն իր ուրոյն համոզումներով եւս համամիտ է Հայաստանը շանջատել խորհրդային կեդրոնական հովանիէն, կայն նկատելով արդարացիօրէն՝ ներկայի միակ հաւանական ու տրամադրելի պաշտպանը Հայաստանի վրայ:

ՀՀՇն նկատի չ'առներ, թէ Գորբաչովին հակադրուողը՝ Ամերիկայի՞ն կը հակադրուի: Իսկ Ամերիկայի հակադրուողը՝ Սփիւռքի մէջ դժուարութիւններու պիտի բախի: ՀՀՇն դիրքորոշուած է Գորբաչովի դէմ եւ կինակցած է Բորիս Ելցինի նման անջատողական ու Գորբաչովի հակադիր անձնաւորութեան մը հետ: ՀՀՇն ունի քանի մը դրդապատճառներ. ա) Գորբաչով (կամ եթէ կ'ուզէք՝ Մոսկուան) համակիր է Ադրբեջանին՝ Ղարաբաղի հարցով եւ պաշարումին երկարաձգումով: բ) Խորհրդային բանակը պիտի չգայ պաշտպանելու Հայաստանը ապերի յարձակումի մը պարագային, ինչպէս փաստուեցաւ Սումգայիթի, Բաքուի եւ այլ դէպքերու մէջ, եւ ինչպէս կը փաստուի ամէն օր Ղարաբաղի մէջ:

գ) ՀՀՇն յոյս ունի, թէ Հայաստան իր հարեւան երկիրներուն հետ կրնայ բնականոն յարաբերութիւններ մշակել, հաւատալով թէ անոնց մօտ տնտեսական շահերը աւելի գերակշիռ են, քան քաղաքական շահերը:

Թրքական կամ փանթուրքիկմի վտանգին տարբեր գնահատումը՝ ա՛լ աւելի կը սրէ հակադրութիւնը ՅՅԴի եւ ՀՀՇի միջեւ:

ՅՅԴի ժողովրդավարական իրաւունքն է ընդդիմադիր ուժ կազմել, քննադատել, ըմբոստացնել ՀՀՇն: Ու չենք տարակուսիր, թէ ո՛րքան օգտակար կրնայ ըլլալ ընդդիմադիր ճակատին դերը՝ անորոշութեան եւ խարխափումներու այս օրերուն: Ի վերջոյ, ատիկա՝ կը պահանջեն ժողովրդավարական օրէնքները ապատ աշխարհին մէջ:



Այս պատճառով, սխալ կը գտնենք ընդդիմութեան բացակայութիւնը ՌԱԿի եւ ԱԴՀԿի մօտ, ՀՀՇի հանդէպ, յատկապէս Թուրքիոյ երկարուած ձեռքի քաղաքականութեան մասին, որուն իրենք ալ համաձայն չեն, քանի իրե՞նք ալ պիտի շուրջեն Հայ Դատը ծախել պնակ մը ոսպապուրի համար: Այս հարցին մէջ ՅՅԴի հետ ձայնակցելու վախը պէտք չէ լռութեան մատնէ կիրենք: Պէտք չէ ձգել, որ ՀՀՇի դէմ մղուած պայքարը այս հարցին շուրջ, դառնայ մենամարտ մը ՅՅԴի եւ ՀՀՇի միջեւ, Ծոցի պատերազմին պէս: Գրաւը՝ բոլորիս համար է:

Այս բոլորը՝ աղէկ: Սակա՛յն...

Սակայն այս օրերուս, ո՛չ մէկ ընդդիմութիւն՝ ո՛ր կողմէ ալ գայ, արդարանալի կամ օգտակար կրնայ ըլլալ, եթէ ան ձգտի միմիայն ՀՀՇն տապալելու եւ եթէ, կայն տապալելու պարագային, չունենայ պահանջուած կշիռն ու ուժը անոր թողած բացը գոցելու...: Ցաւ ու նման Գորբաչովի անձին, որ հապարումէկ ընդդիմադիրներ ունի, բայց անոնց մէջ չունի՝ մէկը, որ կարենայ Սովետ Միութեան դեկը ըստանձնել ներկայիս, անոր փոխարէն:

ՅՅԴն կամ ուրիշ մէկը՝ կրնայ ի վերջոյ տապալել ՀՀՇն, օգտուելով անոր անփորձառութենէն, անոր դիկած սխալներէն եւ անոր յարուցած ժողովրդային դժգոհութիւններու ալիքէն: Բայց կա՞յ մէկը, որ իր այժմեան կազմակերպուածութեամբ եւ տուեալներով՝ ՀՀՇի տեղը գրաւէ: Մեծագո՛յն աղէտը այսօր, ապատ ընդդիմութեան անունին տակ, իշխանութեան մակարդակով պարապութիւն մը ստեղծելն է, պարապութիւն մը, որ երկիրը անկառավարելի պիտի դարձնէ, պիտի ստեղծէ շփոթ կացութիւն, անիշխանութիւն եւ մա՛հ... Լիբանանականացում..., որմէ պիտի օգտուին հայրենիքի թշնամիները, արտագաղթը, ինչ որ ո՛չ մէկ գնով ՅՅԴի ուզածը կրնայ ըլլալ, կարծեմ:

Հեշտ չէ ՀՀՇին յաջորդել:

Պէյրութ

digitised by A.R.A.R.@

ԾՐՋԱԴԱՐՁ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մարտ ամսվա մեջ «Հյուրրիյեթ»ը արդեն երկրորդ անգամ է անդրադառնում Մոսկվայում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալի Երեւան կատարելիք այցին: Քաղաքական մեկնաբան Էրթուղրուլ Օզքյոքը, թերթի մարտի 22-ի համարում նշում է, որ վերջերս Հայաստանի ղեկավարությունը պաշտոնապես դիմել է Վուրալին տեղեկանալու համար, թե երբ է նա պատրաստվում այցելել Երեւան: Ըստ նրա Վուրալն արդեն խորհրդակցում է Անկարայի հետ, եւ շուտով կճշտվի այցելության թվականը:

Օզքյոքի կարծիքով, Վուրալի այցը Երեւան, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա պպրիլի 8-ին: Այսպիսով, Թուրքիայի դեսպանը, առաջին անգամ պաշտոնական այցով կժամանի Հայաստան:

Նշելով, որ նախաձեռնությունը տվյալ հարցում պատկանում է պրեզիդենտ Օզալին, Օզքյոքը գրում է. *«Վոլքան Վուրալը ամենուրեք ուղեկցում էր պաշտոնական այցով ԽՍՀՄ-ում գտնվող Թուրգուտ Օզալին: Այդ ընթացքում նրանք, ամենայն հավանականությամբ, քննարկել են Հայաստանի հետ հարաբերությունների հարցը, հավանաբար անդրադարձել նաեւ Երեւան կատարվելիք ուղեւորությանը: Պատահական չէ, որ Օզալի այցից անմիջապես հետո է դեսպանի ուղեւորության ժամանակը ճշգրտվում»:*

Օզքյոքի բնութագրությամբ, Պարսից ծոցի պատերազմից հետո, Թուրգուտ Օզալը Թուրքիայի առաջ ծառացած արտաքին քաղաքական խնդիրների հաղթահարման գործում դրսեւորում է միանգամայն նոր մոտեցում եւ նա Վոլքան Վուրալի Երեւան կատարելիք ուղեւորությունը գնահատում է այդ նույն մոտեցման տեսանկյունից: Ըստ Օզքյոքի, Օզալը դիմում է համարձակ քայլերի, մտածելով, որ առաջացած պայմանները միջազգային ասպարեզում Թուրքիայի կարեւորագույն խնդիրների լուծման համար խիստ նպաստավոր են:

Հիրավի, շնորհիվ Թուրգուտ Օզալի, Թուրքիայի քրդական քաղաքականության մեջ շրջադարձ է տեղի ունենում: Ինչպես նշում է Օզքյոքը, հիմա արդեն Օզալն այդ նույն մոտեցումը դրսեւորում է Հայաստանի հարցում:

□

Օզալը կիսով չափ քո՞ւրդ

Ինչպիսին էլ լինի Թուրգուտ Օզալի անձնական մոտեցումը, նրա քրդական քաղաքականությունը Թուրքիայում դժգոհության ալիք է առաջացնում: Երկրի ընդդիմադիր ուժերն ու մամուլը հատկապես մեծ զայրույթով են խոսում Քրդիստանի հայրենասերների միության նախագահ Ջալալ Թալաբանիի եւ Քրդիստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Մասուդ Բարզանիի ներկայացուցիչ՝ Մուհսին Դիազիի Անկարա ժամանելու փաստի մասին: Այցը Օզալի նախաձեռնությամբ տեղի էր ունեցել մարտի սկզբներին: Ինչպես այդ գործիչների հետ բանակցությունների, այնպես էլ նրանց Անկարա ժամանման մասին իրազեկ չէր պահվել նույնիսկ երկրի կառավարությանը: Հայտնի է, որ Իրանը, Իրաքն ու Թուրքիան, ունենալով հանդերձ միմյանց հետ քաղաքական բազմաթիվ տարաձայնություններ, որպես կանոն քրդական հարցում կարողանում էին միշտ լեզու գտնել: Սակայն Պարսից ծոցի ճգնաժամը հանգեցրեց միջազգային իրավիճակի կտրուկ փոփոխության: Սադդամի վարչակարգի դեմ զինված պայքարի դիմելով՝ քրդերը լուրջ քայլեր են կատարում Իրաքում նոր կարգավիճակի ձեռքբերման ճանապարհին: Ամերիկյան եւ Եւրոպական մամուլը հաճախ են անդրադառնում քրդական ինքնավարության ստեղծման հարցին: Հենց այդ հարցն էլ անհանգստացնում է թուրքական բանակին եւ երկրի քաղաքական տարբեր շրջաններին: Վերջիններս, ինքնավարությունը համարելով անկախության ճանապարհին կատարված կարեւոր քայլ, Թուրգուտ Օզալին մեղադրում են քրդերի պայքարը աջակցելու միջոցով Թուրքիայի տարածքային ամբողջականության համար սպառնալիք ստեղծելու մեջ: Իսկ թուրքական մամուլը լայնորեն անդրադառնում է Օզալի քրդական «ոչ հաշվենկատ» քաղաքականությանը, հաճախ գործը հասցնում հեգնանքի:

*«Հյուրրիյեթ»*ը մարտի 19-ի համարում, չխորանալով վերջերս Ստոկհոլմում կայացած Քրդական միջազգային կոնֆերանսի մանրամասնությունների մեջ, հիմնական ուշադրությունը բեւեռում է Օզալի հանդեպ քրդերի այսպես կոչված անօրինակ «համակրանքի» վրա եւ Թուրքիայի պրեզիդենտին ներկայացնում որպես կոնֆերանսի հերոս՝ օգտագործելով «Օզալը՝ Քրդիստանի պրեզիդենտ», «Նա վերադառնում է իր արմատներին» եւ այլ կարգի արտահայտություններ:

Դժվար է ասել, Օզալը վերադառնում է իր արմատներին թե ոչ, սակայն թուրքական «Ջումհուրրիյեթ» թերթի թղթակից Ահմեթ Թանը, անդրադառնալով այդ հարցին, նշել է, որ Օզալը մոր կողմից կիսով չափ քուրդ է:

Հ. ՕԱՔԻՆՅԱՆ, թրքագետ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻ ԿԱՐԾԻՔԸ

Հատվածներ ՌՈԼԱՆ ԴՅՈՒՄԱՅԻ՝ «Մոնդին» տրված հարցազրույցից

- Հավատո՞ւմ եք իսլամական ալիքի վտանգին, թե կարծում եք, որ այն արդեն անցել է:

- Եթե միջազգային հանրությունը այս անգամ էլ չլուծի պաղեստինյան հարցը, իրական վտանգ կծնվի, որ իր հետեւից կընթանա մասնավորապես պահանջկոտ ու ըմբոստ երիտասարդությանը: Վերջինս կթքի միջազգային պարապ բանավեճերի վրա: Այդ ժամանակ, իսկապես, իսլամական շարժում կսկսվի: Եթե դա կրոնական ցույցերի տեսք ընդունի, չարիքներից փոքրագույնը կլինի: Սակայն վախենամ, թե հուսահատ քայլեր արվեն, բռնության ու ահաբեկչության դիմեն:

- Ի՞նչ եք մտածում Իրանի դիրքի մասին:

- Իրանը ցուցաբերեց պատասխանատվության եւ ճարպկության առաջին զգացողություն: Առաջին օրերից իսկ հայտարարելով չեզոք քաղաքականության մասին, Իրանը վերանվաճեց միջազգային վստահությունը: Հավատալով այնպիսի սկզբունքների նկատմամբ իր հավատարմությունը, ինչպիսիք են սահմանների անխախտությունն ու հավասարակշռությունը, Իրանը մտադրվում է մասնակցել շահագրգիռ երկրների միջեւ հարաբերությունների կարգավորմանը: Ֆրանսիան Իրանի հետ վերականգնել է նորմալ հարաբերություններ եւ հաշվի է առնում Մոցում նրա ունեցած հսկայական տեղը:

- Թուրքիան ըստ ձեզ փորձում է մտնել ընդհանուր շուկա՞, թե իշխող տերություն դառնալ մի այնպիսի գոտում, ուր 140-150 միլիոնանոց թուրքական ցեղեր են ապրում, կամ այս երկուսը համադրել իրար:

- Բոլորը միասին: Թուրքիան իրեն դրսեւորեց որպես միացյալ ուժերի հավատարիմ դաշնակից, որոնք հաղթեցին Մոցի պատերազմում: Այն այսօր հանդարտության քաղաքականություն է վարում եւ կտրուկ մերժում Իրաքի բաժանմանը վերաբերող բոլոր լուրերը: Թուրքիան հույս ունի իր այս վարքով շահ կորզել եւ դաշնակիցների հետ հարաբերություններում, եւ ընդհանուր շուկայում: Նրա մասնակցությունը եւրոպական հանրությանը այսօր չի նախատեսվում: Սակայն Ֆրանսիան հակված է, որպեսզի Թուրքիայի նկատմամբ սահմանափակումները վերացվեն եւ խորացվի Թուրքիայի եւ Եւրոպայի միջեւ առեւտրական հարաբերությունները:

- Քրդերը որեւէ բանի հույս ունե՞ն միջազգային այս նոր կարգավորման ժամանակ:

- Քուրդ ժողովուրդը հուսահատված է: Ֆրանսիան բազմաթիվ անգամ պաշտպանել է քրդերին: Նրանք փոքրամասնություն են կազմում: Պրեզիդենտ Միտերանը վերջերս խոսել է այդ խնդրի մասին: Հարցը արդեն բացված է:

- Իսկ Կիպրո՞սը: Մի՞թե ամբողջովին մոռացվել է թուրքական ներխուժումը:

- Ոչ: Դրա մասին ես խոսում եմ թուրքերի եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հետ: Դա այնպիսի թղթապանակ է, որի նկատմամբ արեւմուտքը, ՄԱԿ-ը այնպիսի հաստատակամություն պիտի դրսեւորեն, ինչպես սպաղեստինցիների հարցում: Այդտեղ նույնպես երկու կշռի եւ երկու չափի մասին խոսք չի կարող լինել: □

Hürriyet ԹՈՒՐՔԵՐԸ ԴԺԳՈՀՈՒՄ ԵՆ ՕԶԱԼԻՑ

Զալալ Թալաբանիի եւ Մուհսին Դիազիի այցի շուրջ առաջացած դժգոհությունը, երկրի հասարակայնության շրջանում բուռն զայրույթի վերածվեց, երբ վարչապետ Աքբուլութը հայտարարեց, որ ինքն այցի մասին տեղեկացել է մամուլից: Ճիշտ է, հետագայում նա պրեզիդենտ Օզալի առաջ չմեղանչելու համար հրաժարվեց իր խոսքերից, սակայն մթնոլորտն արդեն մեծլիսում բավականին շիկացել էր: Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցության դեպուտատ Թեւֆիք Քոչաքը դիմելով Ցոլդերրոմ Աքբուլութին հարցրեց. *«Ասացեք խնդրեմ, վարչապետն ո՞վ է, դո՞ւք, թե մեկ ուրիշը»*: Այնուհետեւ դեպուտատը մեջլիսի ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ *«քուրդ առաջնորդների հետ Անկարայում տարվող եռօրյա բանակցություններին Թուրքիայի անվտանգության գործակալության (MIT) պատասխանատու աշխատողների հետ միասին մասնակցում էին ԱՄՆ-ից ներկայացուցիչներ, իսկ վարչապետն ու նրա կաբինետի անդամները՝ ոչ»*:

Պատահական չէ, որ թուրքական մամուլը Թալաբանիի ու Դիազիի այցն Անկարա համեմատում է հոլիվուդյան դետեկտիվի հետ: Ինչպե՞ս էր իրականացվել այդ «չարաբաստիկ» այցը, որի շուրջ երկրում ծավալվում է անառողջ իրարանցում: Այսպես, պրեզիդենտ Թուրգուտ Օզալը հատուկ լիազորի միջոցով կապ է հաստատում վերոհիշյալ գործիչների հետ: Ինքը՝ Թալաբանին, Վաշինգտոնում եղած ժամանակ, փետրվարի 27-ին բավականին անորոշ ձեւով ակնարկում է այդ մասին: Եւ ահա, մարտի 8-ին սիրիական քաղաքացիական ավիացիայի ինքնաթիռով նա Դիազիի հետ միասին ժամանում է Ստամբուլ: MIT-ի երկու աշխատակիցներ նրանց դիմավորում են եւ շուրջ 2,5 ժամ հետո մեկ այլ ինքնաթիռով ուղեկցում Անկարա: Քուրդ առաջնորդները տեղավորվում են պաշտոնական հյուրերի համար առանձնացված «Անկարա Պալաս» հյուրանոցում: Այս բոլորը կատարվում է աննկատ, հյուրերի ժամանումը մնում է գաղտնի եւ, իհարկե, նրանց անձնագրերը չեն արձանագրվում ոչ օդանավակայաններում, ոչ էլ հյուրանոցում: Սակայն, որպես անվտանգության կանխամիջոց, շենքում ներսից եւ դրսից հատատվում է հատուկ նշանակման ջոկատներ հսկողություն: Այնուհետեւ «Անկարա Պալաս»ից անմիջապես հեռազանգում է Զանքայա՝ պրեզիդենտի ռեզիդենցիան եւ հայտնում, թե «հյուրերը ժամանել են: Նույնը հաղորդվում է նաեւ MIT-ի գործակալության խորհրդականներ գնելու Թեոման Քոմանին ու Թուգայ Օզչերիին: Վերջիններս ժամանում են հյուրանոց եւ սկսում բանակցությունները: Հյուրերը Անկարայում մնում են երեք օր, բանակցությունների ավարտից հետո՝ վերադառնում Դամասկոս:

«Հյուրրիյեթ»ի թղթակից Ազիզ Ուբքան հենվելով հավաստի աղբյուրների վրա, նշում է, որ բանակցությունների ընթացքում շոշափվել են *իրաքում քուրդ-թուրքմենական ինքնավար մարզի ստեղծման եւ այդ գործում Անկարայի քաղաքական աջակցության, Իրաքի թուրքմենների նոր կարգավիճակի, շիա արաբների ապստամբության հետ կապված Իրանի ազդեցության հետագա աճի, Քրդիստանի Բանվորական կուսակցության (PKK) հանդեպ համատեղիրքորոշում մշակելու եւ այլ հարցեր:*

Թուրքական կողմը քուրդ գործիչների պահանջել է ինչպես Բեյրութում հակաիրաքյան ընդդիմադրության հավաքի, այնպես էլ Ստոկհոլմի քրդական միջազգային կոնֆերանսի ժամանակ *«բույլ չտալ Թուրքիայի տարածքային ամբողջականության ուղղված հնարավոր որեւէ որոշման ընդունում»*:

Լուրջ խոսակցություն է ծավալվել հաճաքրդական ճակատի մեջ ընդգրկվա տարբեր խմբավորումների թուրքական որոշման շուրջ, ապա *Թալաբանիին շնորհակալություն է հայտնվել PKK-ի առաջնորդներին թուրքական իշխանությունների հանձնելու առնչությամբ:*

Թալաբանիի ու Դիազիի այցն Անկարա ցույց է տալիս, որ պրեզիդենտ Թուրգուտ Օզալը շրջադարձ է կատարում Թուրքիայի քրդական քաղաքականության մեջ, ընդ որում ոչ առանց Վաշինգտոնի օրհնության: Սակայն այդ շրջադարձը վերաբերում է ոչ թե Թուրքիայի, այլ սադդամյան վարչակարգի դեմ զինված պայքար մղող Իրաքի քրդերին:

□

ՀԱՍԱՆՈՎՆ ՈՒ ՕԶԱԼԸ Ի՞ՆՉ ԵՆ ԱՍԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Թուրքիայի ու Ադրբեջանի միջեւ ամենակարճ ճանապարհը Հայաստանով է անցնում, եթե չեք ուզում Վրաստանի հողերը օգտագործել: Սա արդյոք արգելք չէ՞: Երբ այս հարցը տվեցինք, Ադրբեջանի վարչապետ Հասան Հասանովը ոտքի կանգնեց ու ասաց.

«Ադրբեջանի արտահանումի 30 տոկոսը Հայաստանով է անցնում: Մինչդեռ Հայաստանի արտահանումի ու ներմուծումի 70 տոկոսն է Ադրբեջանով անցնում: Եթե մի բան պատահի, կփակենք ճանապարհն ու նրանք էլ կտեսնեն: Եթե նրանք իրենց վատն են ցանկանում, դրան ասելիք չունենք»:

Հ. Հասանովի այս խոսքերը ծափահարություններով ողջունվեցին ու մի անգամ էլ ցույց տվեցին Թուրքիա-Ադրբեջան գծի աշխարհաքաղաքական կարեւորությունն ու արժեքը:

Թ. Օզալը ավելի մեղմ ու ճկուն ոճով պատասխանեց այս խոսքերին.

«Ես հավատում եմ, ասաց նա, որ հարաբերությունները այնքան ամուր կլինեն որքան հիմնված լինեն փոխադարձ շահերի վրա: Կա՛մ այն է, որ շահ ես ունենալու, կա՛մ այն է, որ պիտի վախենաս քո շահը վտանգելուց: Հիմա նայենք Հայաստանի կացությանը: Մի կողմը Թուրքիան մյուս կողմն էլ Ադրբեջանն ու Վրաստանը Ի՞նչ է անելու: Պետք է լավ քննի այս կացությունն ու ըստ այնմ մտածի...»:

Հասանովի խոսքերին ավելացված Օզալի այս խորհրդածությունները կարող են մեկնաբանվել թե՛ իբրեւ «մեղմացումի հրավեր», եւ թե իբրեւ «նախազգուշացման հրավեր»:

«Գ. ունեշ»

ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ

«ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ԽՈՀԵՄ Է»

Թվում է, թե Անկարան ուզում է վերանայել իր քաղաքականությունը Կիպրոսում, որը «թունավորում» է նրա հարաբերությունները Եւրոպական ընկերակցության հետ, որի թեկնածուն է ինքը: Պրեզիդենտ Թուրգուտ Օզալը ԽՍՀՄ կատարած պաշտոնական այցի ժամանակ նշել է Կիպրոսում *«ֆեդերացիայից ավելի ճկուն»* միջհամայնքային ամբողջականության հնարավորությունը, ավելացնելով, որ *«պետք է անել այն, ինչ խոհեմ է»*:

Թուրքիայի արտաքին գործոց նախարար Ահմեդ Ալփթեմոչինի կարծիքով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 649-րդ բանաձեւը *«լավ պատեհություն»* է ստեղծում հարցի լուծման համար: Նա հիշեցրել է, որ այդ բանաձեւը բացահայտորեն հիշատակում է *«կղզում, երկու շրջաններում երկու ժողովուրդների ներկայությունը»* եւ այն փաստը, որ «երկու *համայնքները պետք է միավորվեն քաղաքական հավասարության հիմքի վրա»*:

ԱՆԿԱՐԱՆ ՈՒԶՈՒՄ Է ՎԾՌԱԿԱՆ ԴԵՐ ԽԱՂԱԼ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Թուրքիան չի թաքցնում, թե ինքն ուզում է վճռական դեր խաղալ Մերձավոր Արեւելքի «նոր կարգում»:

ԱՄՆ-ի սինվորական մի պատվիրակություն մոտ ժամանակներս Անկարա կժամանի պարզելու երկկողմանի մի նոր համաձայնության մանրամասնությունները, որը ԱՄՆ-ի կինված ուժերին թույլ կտա մարտավարական կենքեր պահեստավորել Թուրքիայում: ԱՄՆ-ի բյուջեով նախատեսվում է 1991 թվականին Անկարային 550 միլիոն դոլլարի օգնություն տրամադրել, որին կավելացվեն 82 միլիոնի ռազմական շտապ օգնությունը, ինչպես նաեւ Պարսից ծոցի պատերազմի հետեւանքով Թուրքիայի կորուստները փոխհատուցելու համար Սենատի հատկացրած 200 միլիոն դոլլարը:

Ֆրանս պրես

digitised by A.R.A.R.@

Քաղցը ստիպում է մարդկանց դիմել բարեփոխությունների կամ ռեպրեսիաների: 1934 թվականին, երբ սովը թափանցեց Խորհրդային Միություն, կոմունիստական կուսակցության ներսում մի շարժում առաջ եկավ, որն սկսեց մտածել Ստալինին եւ նրա գաղտնի ոստիկանությանը՝ ՀԿՎԴ-ն փոխարինելու մասին: Այդ շարժման ներկայացուցիչներից հատկապես մեծ հեղինակություն էր վայելում Լենինգրադցի Սերգեյ Կիրովը:

Հակառակ այն փաստին, որ կուսակցության 17-րդ համագումարում բոլոր ելույթ ունեցողները գովաբանեցին Ստալինին, այնուամենայնիվ վերջում պարզվեց, որ 15 պատվիրակներ քվեարկությանը չէին մասնակցել: Սա չարագուշակ երեւույթ թվաց գաղտնի ոստիկանությանը:

Նույն տարվա դեկտեմբերին Կիրովն ըսպանվեց՝ կոմունիզմի պատմության մեջ անցնելով որպես կատարված սպանություններից ամենաազդեցիկը: Ստալինը ցնցված էր: Զարմանալի զուգադիպությամբ Կիրովի թիկնապահը, որ գնում էր հարցաքննվելու Ստալինի մոտ, ճանապարհային ավտովթարի զոհ գնաց: Մի երիտասարդ կոմունիստ իր վրա վերցրեց ամբողջ մեղքը: Գաղտնի ոստիկանության պատրաստած կեղծ ամբաստանության հետեւանքով Գրիգորի Զինովեւը՝ Կիրովի լենինգրադցի հովանավորը, դարձավ այդ սպանության մեղսակիցը: Սրան հաջորդեցին 1937 թվականին Մոսկվայի կողմից պատրաստած «ցուցադրական» դատավարությունները, որոնք կոմունիստների շարքից «զտեցին» եւ մահվան դատապարտեցին բոլոր ընդդիմադիրներին:

Սակայն մախաթը պարկում չես թաքցնի: 1956-ին արտասանած իր «գաղտնի ճառում» Խրուշչովն ակնարկեց, որ իրականում Ստալինը եւ իր գաղտնի ոստիկանությունն էին մեղավոր այդ սպանությունը կազմակերպելու մեջ: Իսկ 30 տարի անց, բացախոսության կարգախոսով, Միխայիլ Գորբաչովն առաջարկեց իր մտերիմ Ալեքսանդր Յակովլեւի գլխավորությամբ կազմել մի հանձնախումբ, որը պետք է մանրազնին ուսումնասիրեր արխիվային փաստաթղթերը եւ բացահայտեր ճշմարտությունը Կիրովի գործի վերաբերյալ:

Ինչպես եւ կարելի էր սպասել, սա սոսկ խորհրդավոր սպանություն չէր: Այն տանում էր խորհրդային պատմության եւ կոմունիզմի էության խորքերը: Եթե ամերիկացիների համար Կիրովի անունը կապված էր լոկ Լենինգրադի բալետի խմբի հետ, ապա Ստալինի գաղտնի ոստիկանության ժառանգ ՊԱԿ-ի աշխատակիցների համար նրա սպանության ամեն մի մանրամասնի բացահայտում հարված էր հասցնելու դրանց իսկ օրինականությանը:

Այսօր դարձյալ սով է Խորհրդային Միությունում: Հակառակ անցյալ տարվա հացահատիկի ռեկորդային բերքահավաքին, նեխած վարչակարգը չկարողացավ այն հացի վերածել եւ ժողովրդին մատուցել: «Գոսպլանի» հաղորդումների համաձայն այս տարի ազգային արդյունաբերությունը նվազելու է մոտ 12 տոկոսով, այսինքն՝ 4 անգամ ավելի, քան անցյալ տարի:

Այս հաղորդումը համապատասխանում է Գեորգի Արբատովի այն մեկնաբանությանը, ըստ որի ռազմական արդյունաբերությանն այս տարի տրամադրվել է բյուջեի 33 տոկոսը, այն դեպքում երբ ԱՄՆ-ում այն կազմում է 6 տոկոս: Այս հարցում ԽՍՀՄ-ի պես «կայազորային» պետությունը շատ է նմանվում կատաղած գայլի, որն ընկնում է դանակի վրա արյունը լիզելու, չգուշանալով, որ դանակն իրեն էլ կարող է վնասել:

Մեր կարծիքով, միակ խելամիտ ելքը այս իրավիճակից կլիներ հետեւյալը. ռազմական ծախսերը մեծապես կրճատել, լուծարքի ենթարկել հսկայական, անարդյունավետ ՊԱԿ-ը եւ շուկան հանձնել հանրապետությունների տնօրինությանը:

Սակայն Գորբաչովը դիմել է մեկ այլ՝ ուժային դիրքի ամրապնդման միջոցին: Նրա ծրագիրը ենթադրում է մի կողմից ավելի մեծ ծախսեր կատարել բանակն ու գաղտնի ոստիկանությունը հզորացնելու համար, մյուս կողմից սննդարդյունաբերությանն անհրաժեշտ տեսակների օժանդակություն «մուրալ» Արեւմուտքից եւ Չինաստանից:

Պատմությունը կրկնվում է: Քաղցը ստիպում է մարդկանց դիմել բարեփոխությունների կամ ռեպրեսիաների:

Վերջերս Մոսկվայում եւ Լենինգրադում համապատասխանաբար 100 եւ 70 հազարից ավելի համախոհներ ցույց կազմակերպեցին ի պաշտպանություն Բորիս Ելցինի, որը մարտահրավեր է նետում՝ կենտրոնական իշխանությունը պահպանելու գորբաչովյան կոչերին եւ մտադիր է ստեղծել հակակոմունիստական կուսակցություն:

Պրեզիդենտ Բուշի կողմից անխոհեմություն է նորարարին քննադատելը եւ բռնապետին նեցուկ կանգնելը: Նա այդպիսով ածապես վնասում է իր հեղինակությանը, որը վերջերս խիստ բարձրացել էր Պարսից ծոցի պատերազմի հետեւանքով: Անգլիայի վարչապետը կարճատեսորեն ընդօրինակում է նույն սխալը, իսկ Երախտագիտարանը՝ մոռացության տալով «արյունոտ կիրակին» Մերձբալթյան հանրապետություններում, օժանդակում է բռնակալին:

Վերջերս Գորբաչովի վաղեմի բարեկամ՝ Ալեքսանդր Յակովլեւը Կիրովի սպանության մասին մի երկար հոդված էր գրել «Պրավդա»ում, հավանաբար ցանկանալով բարձրաձայն անազանգել դեպքերի նման շրջադարձին: Նրա ղեկավարած հանձնախումբը սահմոկեցուցիչ փաստեր է կուտակել Ստալին-գաղտնի ոստիկանություն հանցավոր մեղսակցության վերաբերյալ: Յակովլեւը պնդում է, թե թիկնապահի մահվան պատճառը պատահական ավտովթարը չէր:

Կասկած չկա, որ Յակովլեւն այդ հոդվածով նպատակ ունի զգուշացնելու Բորիս Ելցինին, որի ավտոմեքենան արդեն 4 անգամ վթարի է ենթարկվել անցյալ տարվա ընթացքում:

Կիրովն սպանվեց Ստալինի հրամանով, որն այն ժամանակ ասպարեզից հեռացնում էր բոլոր նրանց, ովքեր հակադրվում էին իրեն: Բորիս Ելցինը այժմ միեւնույն քաղաքական իրադրության մեջ է գտնվում. 1991 թվականին նա կանգնած է նույն վտանգի առաջ, ինչ Կիրովը՝ 1934-ին:

Լոնդոն, 22 մարտ 1991

The Economist
էսսէ

ԿԻՐՈՎԻ ՈՒՐՎԱԿԱՆԸ

ՊԱԿ-ը կարող է դարձյալ հարվածել

ՈՒԻԼՅԱՄ ՍԱՖԱՅՐ

Մինչ Սադդամ Հուսեյնի իշխանությունը ներքում է, իրաքցի քրդերը խիզախ մարտեր են մղում այդ բռնապետի դեմ, որի ռազմական ինքնաթիռները ժամանակին թունավոր գազ էին արձակել նրանց հայրենի գյուղերի վրա: Քուրդ պարտիզանական ջոկատները վերջերս, մեծ առաջխաղացում կատարելով, հայտարարեցին իրենց կողմից 5 հյուսիսային շրջանների գրավման մասին: Թուրքերն ահաբեկված են իրենց սահմանի վրա տիրող խռովությունների պատճառով: Ամերիկացիները, մյուս կողմից, կարող են հրապուրել քրդերին (որոնք Իրաքի 19 մլն. բնակչության 15 տոկոսն են կազմում) անկախություն պարգեւելու հնարավորությունով, պարզապես որպեսզի իրագործեն Իրաքին խեղելու իրենց ծրագիրը:

Սակայն ինչքան էլ այս գաղափարը արդար եւ հրապուրիչ թվա, այն դառը հիշողություններ է արթնացնում նախկինում Վաշինգտոնի կողմից նույն քրդերին ցուցաբերված «օժանդակության» մասին:

Այդ փորձը ողորմելի ավարտ ունեցավ եւ ո՛չ օգուտ բերեց քրդերին, ո՛չ էլ պատիվ՝ Միացյալ Նահանգներին:

Քրդերի համար այն դառը, սակայն արդեն սովորական դարձած փորձություն եղավ: Լինելով արաբներից տարբեր եւ ունենալով իրենց ուրույն լեզուն, քրդերը, որոնք մոտ 15 մլն. են հաշվվում, ցրված են Իրաքի, Իրանի, Թուրքիայի, Սիրիայի եւ Խորհրդային Ասիայի ամենահեռավոր անկյուններում: Նրանց ամբողջ պատմությունը ամփոփված է իրենց իսկ կողմից հորինված մի դիպուկ ասացվածքի մեջ՝ *«Քրդերը բարեկամներ չունեն»*:

Իրականում էլ այդպես է: 1920 թվականին մի պահ թվաց, թե քրդերն էլ հրեաների նման կարող են իրենց ազգային, սեփական հողն ունենալու հույսեր փայփայել: Հաղթական դաշնակից պետություններն այդ ժամանակ երբեմնի հզոր Օսմանյան կայսրությունն էին մասնատում եւ, Սեւրի դաշնագրով, նույնիսկ խոստացել էին քրդերին «բաժին հանել»:

Սակայն ոչինչ չտացվեց: Մեծ Բրիտանիան չափազանց զբաղված էր Իրաքը «ստեղծելով», անգլիացի գաղութարարները գտան, որ նոր պետությունն իր մեջ պետք է ներառնի նաեւ նավթով հարուստ օսմանյան Մուսուլ նահանգը, որը միաժամանակ քրդական շրջկենտրոն էր:

Հաշեմիդների ընտանիքից Ֆեյսալ անունով մի օտարականի թագավոր կարգեցին՝ վավերացնելով նրա ընտրությունը կեղծ հանրաքվեի միջոցով: Իրավազրկված քրդերը, միանալով իրար, ապստամբեցին: Նրանց ճնշելու նպատակով բրիտանիացի զինվորները կրակ բացեցին, իսկ ռազմօդային ուժերը տասը տարի շարունակ կռիվներ մղեցին հյուսիս-արեւելյան լեռնային շրջաններում ծվարած քուրդ ապստամբների դեմ:

Դրանք շարունակվեցին նույնիսկ այն բանից հետո, երբ Իրաքը 1932 թվականին ձեւական անկախություն ձեռք բերեց: Բրիտանացիների կողմից հատուկ մարզված, նորաստեղծ իրաքյան ռազմօդային ուժերը չդադարեցին ռմբակոծությունները, մինչեւ որ Մուստաֆա Բարզանի անունով մի տաղանդավոր ու ճկիրված քուրդ առաջնորդ երեւան եկավ, որը հարատեւ պայքար մղելուց հետո, վերջապես կարողացավ Խորհրդային Միության աջակցությամբ հիմնադրել փաստացի (դեֆակտո) քրդական մի պետություն Իրաքի իրանա-թրքական սահմանագծի մոտակայքում:

Բաղդադն այլ ելք չուներ, քան քրդերին ինքնավարություն խոստանալը, սակայն ինչ-ինչ պատճառներով համաձայնությունը չկայացավ, եւ փոխարենը վերսկսեցին կռիվները:

Այս ամբողջ ընթացքում շահագրգռված դիտորդի դերում հանդես էր գալիս Իրանի Շահը, որն այդ ժամանակ Իրաքի հետ անհամաձայնության մեջ էր: Երբ 1972 թվին Ռիչարդ Նիքսոնն այցելեց Թեհրան, Շահը նրան խնդրեց այնպես անել, որ քրդերը «հանգիստ չտան» իրենց հարեւան, սակայն թշնամի իրաքցիներին:

Ամերիկացիները տարակուսեցին, չցանկանալով նույնիսկ անուղղակիորեն գործ ունենալ այնպիսի գործողությունների հետ, որոնք կարող էին անջատողական տրամադրություններ հարուցել շրջանում, մի բան, որ Մոսկվային հնարավորություն կընտար ներթափանցելու այնտեղ: Շահը անդրդվելի մնաց իր խնդրանքի մեջ, ամերիկացիները «փափկեցին», եւ այդ առընչությամբ 16 միլիոն դոլլար արժողությամբ գաղտնի ծրագիր մշակվեց:

Սակայն ո՛չ Իրանը, ո՛չ էլ Վաշինգտոնը իրականում շահագրգռված չէին, որ քրդերը հաղթանակի հասնեն: Հենրի Քիսինջերի համար այդ ծրագիրը *«պարզապես միջոց էր՝ Իրաքին ետ պահելու միջազգային որեւէ արկածախնդրությունից»*: Այս մանրամասնությունները տեղ էին գտել գաղտնի գործունեությունների վերաբերյալ 1976 թվին կազմված Փայքի զեկուցման մեջ, որը հրապարակ հանեց կենտրոնական հետախուզության գրառումներն այն մասին, թե քրդական օժանդակությունը պարզապես *«մի խաղաքարտ էր, որ պետք է խաղացվեր»*:

1975-ին Շահը խաղաց այդ քարտը: Ալժիր քաղաքում Իրաքի հետ նա մի համաձայնագիր կնքեց, որով Բաղդադը հրաժարվում էր Իրանից իր վաղեմի հողային պահանջներից: Իրանն էլ, իր հերթին, պարտավորվում էր դադարեցնելու զենքի մատակարարումը քրդերին:

Տեղեկանալով դավաճանության մասին՝ քրդերը պարզապես ապշեցին: Գնդապետ Բարզանին զուր ջանքեր գործադրեց՝ հանդիպում ունենալու պետական քարտուղար Քիսինջերի հետ, սակայն այս վերջինը բոլոր տեսակի միջնորդներին կտրուկ կերպով հասկացրեց, որ *«հակահետախուզության գործողությունները սովորական միսիոներական աշխատանքներ չէին»*:

Այնուամենայնիվ, ո՛չ Շահը, ո՛չ էլ Վաշինգտոնը չկարողացան օգուտ քաղել այդ սառնասրտորեն ստորագրված դաշնագրից: Իրականում միակ օգտվողը եղավ նոր կառավարիչ Սադդամ Հուսեյնը, որն այդ ժամանակ ամեն ջանք գործադրում էր՝ ամրապնդելու իր իշխանությունը:

Ուրեմն ավելի լավ է, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ քրդերին հանգիստ թողնել, նրանց իզուր հույսեր չներշնչել, թե բարեփոխություններ կլինեն: Ամերիկան դրան ընդունակ ու կարող չէ:

Մարտ, 1991

ՔՐԴԵՐԸ ԽԱՂԱՔԱՐԵՐ ՉԵՆ

Բարեկամներից զուրկ ժողովրդի դառն ու դժվարին ճանապարհը

ԿԱՐԼ Է. ՄԵՅԵՐ, US News & World Report

Քրդերն ամենուրեք հալածվում են

ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ

— *Իրանի* իսլամական հանրապետության պատվիրակությունը, Իրանի արտգործնախարարության պաշտոնյա Մուստաֆա Ֆոմենիի գլխավորությամբ կիրակի օրը ժամանեց Սաուդյան Արաբիա: Պատվիրակության այցի նպատակը Ռիադում իրանական դեսպանատան եւ Ջադդայում այդ երկրի գլխավոր հյուպատոսարանի վերաբացումն է:

Իրանի ռադիոն տեղեկացնում է, որ Ֆոմենին իրանցի ուխտավորների եւ այս տարվա ուխտագնացության վերաբերյալ բանակցություններ է վարելու Սաուդյան Արաբիայի մի շարք պաշտոնատար անձանց հետ:

Հիշեցնում ենք, որ Իրանն ու Սաուդյան Արաբիան երկու շաբաթ առաջ հայտարարել էին երկու երկրների միջեւ 1988-ից ընդհատված դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին: Իրանը մտադիր է այս տարի 110 հազար ուխտավոր ուղարկել Սաուդյան Արաբիա:

— *Իրանի* ներքին գործոց նախարարությանը կից փախստականների հարցերով զբաղվող կոմիտեի մի պաշտոնյա հայտարարել է, թե իրաքյան հակապետական խռովություններն սկսվելուց ի վեր Իրանում ապաստան են գտել շուրջ 50 հազար իրաքցի եւ օտարազգի փախստականներ: Նույն պաշտոնյան հայտարարել է, թե միայն Խոռեմշեհր քաղաքում բնակվում են 14 հազար փախստականներ:

Իրանի իսլամական հանրապետության վերաբնակիչների եւ օտարերկրացիների գլխավոր վարչությունը ՄԱԿ-ին կից փախստականների հանձնաժողովի հետ կնքել է մի պայմանագիր, ըստ որի հիշյալ կազմակերպությունը պարտավորվում է յուրաքանչյուր 100 հազար փախստականի դիմաց Իրանին որպես օգնություն վճարել 30 միլիոն դոլլար: Հայտարարության մեջ ասված է նաեւ, թե Իրանի կառավարությունը Իրաքի փախստականներին օգնելու համար հատկացրել է 2 տրիլիոն ռիալ:

— *Ըստ «Վաշինգտոն պոստի»*, 900 իրաքցի զինվորներ, անցնելով սահմանը, մուտք են գործել Իրանի հարավային շրջանները: Թերթը նշում է, որ բոլոր վիրավորներն էլ իրանական բանակի կողմից գերի են վերցվել: Իրանը դեռեւս չի հերքել այդ լուրը, սակայն Իրանի իսլամական հանրապետության դեսպանը ՄԱԿ-ում մի հուշագրով տեղեկացրել է գլխավոր քարտուղարին, որ Իրաքը քանիցս խախտել է զինադադարի վերաբերյալ ընդունված պայմանները:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ԵՄ

70-ականների կուռքը մեղադրում է

1989 թվականի ամռանը, երբ «Արարատ»ը բարձրագույն խմբի 52-րդ առաջնությունում հերթական պարտությունը կրեց, Մոսկվայում գիշելով տեղի «Տորպեդո»ին, թիմի հիմնական կազմի խաղացողների նախաձեռնությամբ ժողով անցկացվեց եւ որոշում ընդունվեց անվստահություն հայտնել գլխավոր մարզիչ Արկադի Անդրեասյանին: Նրան մեղադրում էին հակամանկավարժական մեթոդներ կիրառելու, խաղացողների ինքնասիրությանը, արքատցիները (15 ֆուտբոլիստներ) հրաժարվեցին մարզվել, կամ խաղալ Ա. Անդրեասյանի գլխավորությամբ:

Մեկ ամիս հետո հանրապետական սպորտպետկոմում, երբ վերջնականապես լուծվում էր այդ հարցը, Ա. Անդրեասյանը շատերի համար անսպասելի հայտարարեց, թե խռովությունը կազմակերպվել էր ոչ թե խաղացողների կողմից, այլ դրսից, եւ իրը ակտիվություն են դրսեւորել մարզական լրագրողներն ու մենկարանները, հատկապես տողերիս հեղինակը:

Երկու ամիս առաջ Ա. Անդրեասյանը ստանձնեց մեր հանրապետության 2-րդ թիմի՝ Արովյանի «Կոտայք»ի ղեկը, իսկ երեկ էլ սկսվեց առաջին խմբի առաջնությունը: Չնայած գրեթե երկու տարի չէինք շփվել, բայց հանուն ընդհանուր գործի որոշեցի զանգահարել: Հանդիպեցինք «Շուպրոն» սրճարանում: Անդրեասյանը համաձայնվեց հարցազրույց տալ պայմանով, որ ձայնագրված ժապավենի մեկ օրինակը իրեն հանձնվի:

- Հիմա էլ այն կարծիքի՞ն եք, որ «Արարատ»ի «ապստամբությունը» դրսից էր կազմակերպված:

- Ես լավ գիտեմ, որ ներսից կազմակերպողները եղել են Աշոտ Խաչատրյանը, Ալեքսանդր Պողշիվալովը, Էրաստ Օսիպյանը եւ Հովհաննես Պողոսյանը: Չեմ կարող ասել, թե կապը դրսի հետ ինչպիսին է եղել, բայց երկու կողմից էլ օգտագործվել է առիթը:

- Իսկ ի՞նչն էր պատճառը:

- Ես հիշյալ ֆուտբոլիստների նկատմամբ պահանջներ ունեի ոչ միայն որպես խաղացողների, այլեւ որպես անձնավորությունների:

- Մի՞թե հնարավոր է չորս խաղացողով ամբողջ թիմում հեղաշրջում անել:

- Այո՛, մեկ խաղացողով էլ հնարավոր է, եթե այդ անձնավորությունը խելոք է եւ իրադրությունը լավ է պատկերացնում: Այդ մարդը Աշոտ Խաչատրյանն էր:

- Բայց նա թիմի առանցքային խաղացողներից մնկն է եւ, ինչքան գիտեմ, կարգապահ: Մի՞թե նրա խաղը ձեզ չէր բավարարում:

- Բավարարում էր, բայց ոչ միշտ: Հարցը այլ է: Նա շատ մարզիչներ է փոխել: Պատճառը, երկար մնա եւ թիմից շահ ունենա:

- Ես նկատել եմ, որ երբ թիմը պարտվում էր, դուք չէիք կարողանում զսպել ձեզ եւ հաճախ դուրս էիք գալիս ափերից, տեղի-անտեղի վիրավորում ոչ միայն խաղացողներին, այլեւ թիմի աշխատողներին: Մարզական չարությունը մեծ՝ մարզիկի համար անհրաժեշտ հատկանիշ է, ձեր խաղալու տարիներին դուք դա ապացուցել եք: Ես վկա եմ եղել ու համոզված եմ, որ դուք ձեր անհաշտ բնավորությամբ շատ բանով եք նպաստել, որ «Արարատ»ը երկու տարի ագրեսիվ հյուր դառնա, որ 1976 թվականի գարնանային առաջնությունում նվաճի փոխչեմպիոնի կոչումը, այն էլ զգալի թարմացված կազմով, երիտասարդ խաղացողներ Խորեն Հովհաննիսյանի, Սամվել Պետրոսյանի, Հարություն Մինասյանի, Ռոբերտ Խալայջյանի, Ալեքսանդր Քերոբյանի, Ավետիս Հովսեփյանի եւ մյուսների հետ համագործակցելով, բայց համոզված եմ նաեւ, որ այդ նույն հատկանիշները ձեզ, որպես մարզչի, շատ-շատ են խանգարել:

Բնավորությունը, ասում են, հնարավոր չէ փոխել, այնուամենայնիվ որեւէ հետեւություն արե՞լ եք:

- Ես դա ընդունում եմ, այդ մասին շատ եմ մտածել ու, կարծում եմ, բավականին կերպարանափոխվել եմ: Բայց հարցին չի կարելի միակողմանի նայել: Երբեմն զայրույթը օգնում է շուտ զգաստացնել խաղացողներին, հատկապես հանդիպումների ընդմիջման ժամանակ: Եւ հաճախ է եղել, որ պարտությունից հետո հաղթանակ ենք տարել:

- Բայց կոնֆլիկտները չափից ավելի չե՞ն:

- Ընդհանրապես վեճը չպետք է խառնել կոնֆլիկտի հետ: Վեճը աշխատանքի ժամանակ օգնում է բացահայտել ճշմարտությունը:

Ես հաճախ եմ զուգահեռ անցկացրել Անդրեասյան խաղացողի եւ Անդրեասյան մարզիչի միջեւ: Ֆուտբոլային իմ կարիերան էլ ամենեւին հարթ չէր: Ես պետք է ավելի շուտ խաղայի «Արարատ»ում, ավելի հաջող հավաքականում: Մեղքն ավելի շուտ մարզիչներինն էր:

- Ստացվում է, որ Անդրեասյան ֆուտբոլիստը մեղադրում է մարզիչներին եւ ընդհակառակը, Անդրեասյան մարզիչը՝ ֆուտբոլիստներին:



Ես հույսեր էի կապում միայն ինձ հետ: Ես կարող եմ խաղացողին այնպես նախապատրաստել, որ նա իրեն լրիվ բացահայտի: Ես ուզում եմ «Կոտայք»ի հետ հասնել այնպիսի բարձունքների, ինչպիսին որ հասել եմ որպես ֆուտբոլիստ:

- Ինձ պետք է ընդունել իմ բնավորությամբ, այդ դեպքում հաջողություն կլինի:

- Դուք քիչ չեք աշխատել «Արարատ»ում:

- 2-3 տարին շատ քիչ է: Իրար լավ հասկանալու եւ հաջողության հասնելու համար առնվազն 5 տարի է պետք:

- Ես չեմ ուզում անուններ տալ, քանի որ կարող է ձեր ճանապարհներն էլի խաչվեն, բայց խաղացողներից շատերը դժգոհում էին, որ դուք իրենց զրկում էիք նախաձեռնությունից:

- Խաղացողը ստեղծագործելու համար պետք է հասունանա, նոր այդ իրավունքը ստանա: Օրինակ, Պոնոմարյովն ինձ չէր թողնում ազատ խաղալ, անընդհատ առաջադրանք էր տալիս որեւէ մեկին անհատապես հսկելու, խանգարելու, իսկ ստեղծագործելու համար ոչ ուժ էր մնում, ոչ ցանկություն:

Հիմա Անդրեասյանը նրանց չի խանգարում, թող ինչքան ուզում են՝ ստեղծագործեն, թող խաղով ապացուցեն:

- Բայց հիմա «Արարատ»ը վատ չի խաղում:

- Դա չի նշանակում, թե թիմը կհասնի հաջողության:

- Իսկ չէ՞ որ դուք հույսեր էիք կապում այս նույն խաղացողների հետ:

- Ես հույսեր էի կապում միայն ինձ հետ: Ես կարող եմ խաղացողին այնպես նախապատրաստել, որ նա իրեն լրիվ բացահայտի:

- Ուրեմն դուք բացառո՞ւմ եք ներկայիս «Արարատ»ի հաջողությունը:

- Ես չեմ կարող հույս կապել այն մարդու հետ, որը հիմա աշխատում է «Արարատ»ում: Նա չի կարող տալ այն, ինչ տվել է Անդրեասյանը: Թող փաստով ապացուցի, գրավի 1-ին, 2-րդ կամ 3-րդ տեղը:

- Հիմա անդրադառնանք առօրյա հոգսերին: Նախ, ինչո՞ւ շուտ վերադարձաք Անգլիայից: Ովքեր լինում են արտասահմանում, ձգտում են երկար մնալ:

- Պատճառները մի քանիսն էին, ամենագլխավորը, որ մայրս է հիվանդ: Աշխատում էի սիրողական թիմի հետ եւ որպես մասնագետ, ստեղծագործական առումով, հետաձ էի ապրում:

- Ինչպիսի՞ն են «Կոտայք»ում ձեր ծրագրերը:

- Ես ուզում եմ «Կոտայք»ի հետ հասնել այնպիսի բարձունքների, ինչպիսին որ հասել եմ որպես ֆուտբոլիստ: Հիմա թիմի վիճակից գոհ եմ:

- «Կոտայք»ում ընդգրկված են չորս ֆուտբոլիստ՝ Էդուարդ Վերանյանը, Այլյոշա Անտոնյանը, Արբանամ Խաչմանյանը եւ Անդրանիկ Հովսեփյանը, ովքեր շարաստիկ 1989-ին ձեր դեմ դուրս եկան:

- Բոլորն էլ խոստովանել են, որ սխալվել են:

- Ի՞նչ տեղ կգրավի «Կոտայք»ը:

- Մենք պետք է լրջորեն նախապատրաստվենք ամեն խաղի: Մնացածը ժամանակ կտա ասելու: Իսկ հիմա ես եմ ուզում մի քանի հարց տալ ձեզ: Ինչպե՞ս է, որ մինչեւ հիմա իրար հետ միշտ խոսել ենք «դու»ով, իսկ այսօր «դուք»ով:

- Վաղեմի կոնֆլիկտից, ավելի ճիշտ վեճից հետո հիմա կարող ենք նորից անցնել «դու»ի:

- Երկու տարի բացակայում էր Անդրեասյան մարզիչը, մարդիկ ի՞նչ էին մտածում նրա մասին:

- Ես միայն իմ կարծիքը կարող եմ ասել. Անդրեասյան մարզիչի որակավորումը կասկած չի հարուցում, բայց նա պետք է ճոկի իր բնավորությունը: Մարզիչ - խաղացողներ հակադարձ կապը պարտադիր է:

Հարցազրույցը վարեց Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

աստղերի կյանքից աստղերի կյանքից աստղերի կյանքից

Գլորիա Էստեֆանը վերադառնում է բեմ

Դժվար է հավատալ, որ Գլորիա Էստեֆանի առաջին նախասիրությունը եղել է հոգեբանի մասնագիտությունը: Բայց ճակատագրի բերումով նա դարձավ *«Մայամի Սաունդ մըշին»* խմբի մեներգչուհին եւ այսօր համարվում է ամերիկյան ամբասիրված երգչուհիներից, որը վերջին տարիներին բավմիցս գլխավորել է թ՛ւ ամերիկյան, թ՛ւ եւրոպական *«հիթ-շքերթները»*:

Բայց մեկ տարի առաջ տեղի ունեցած դժբախտ պատահարը կարող էր ճակատագրական դառնալ նրա համար: 1990 թ. մարտի 20-ին այն ավտոբուսը, որով նա ճամփորդում էր, վթարի ենթարկվեց՝ վնասելով Գլորիայի կողոսկրերից մեկը: Միայն երջանիկ պատահականությամբ չվնասվեց նրա ողնաշարը:

Այսօր, դեպքից գրեթե մեկ տարի անց, Գլորիան, ի ուրախություն իր երկրպագուների, կրկին երգում է: Նա արդեն ձայնագրել է վթարից հետո իր առաջին ձայնապնակը՝ *«Դուրս գալով մթությունից»* վերնագրով:

«Այդ օրերին ես զգացի, թե որքան բարեկամներ ունեմ, որոնք ինձ թիկունք կանգնեցին եւ իմ մեջ արթնացրեցին արագ ապաքինվելու ցանկությունը: Մարդկանց հոգատար վերաբերմունքն իմ հանդեպ՝ ահա թե ինչն ինձ ուժ տվեց հաղթահարելու բոլոր դժվարությունները»,- խոստովանում է Գլորիան:

Երգչուհու ամենամտերիմ ցավակիցն, իհարկե, ամուսինն էր՝ 37-ամյա Էմիլիո Էստեֆանը: Նա օգնեց Գլորիային՝ դուրս գալու այդ ընկճված վիճակից եւ ընդունելու բուժման կուրսը, որն, ի դեպ, ընդգրկում էր աերոբիկ վարժություններ: Այժմ, բարեբախտաբար, վթարի արտաքին բոլոր նշաններն անհետացել են:

Այս տարվա փետրվարի սկզբին, գրում է ամերիկյան *«Փիփըլ»* հանդեսը, հաճելի անակնկալ էր սպասում երգչուհու երկրպագուներին: Նա իր առաջին հեռուստատեսային ելույթն ունեցավ ապաքինումից հետո:

«Դա մի մեծ քայլ էր, ինձ համար,- պատմում է Գլորիա Էստեֆանը:- *Ես զգում էի, թե ինչքան արագ է խփում սիրտս, կարծես ուզում էր դուրս գալ կրծքավանդակից: Զգում էի, որ ոտքերս դողում են: Վախենում էի, որ հեռուստադիտողը դա կվերագրի վթարին: Բայց հենց որ սկսեցի երգել, ամեն ինչ կարծես անցավ: Ես իմ տարերքի մեջ էի»:*

ՍՐԹՈՒՐ ՇՈՒԼԻԿՅԱՆ



Բ. Մելիքյանը գրոհում է «Չերնոմորեց»ի դարպասի վրա

54 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՒՄԲ

5-ՐԴ ՏՈՒՐ

«Արարատ» - «Չերնոմորեց» 0 : 0
«Մետալուրգ» - «Դինամո» Մն. 2 : 1
«Դինամո» Մ. - «Մետալիստ» 2 : 1
«Պամիր» - «Լոկոմոտիվ» 0 : 0
ԲԿՄԱ - «ԳՆԵՊՐ» 1 : 0
«Պախտակոր» - «Տորպեդո» 1 : 1

■ Ֆուտբոլ. ԽՍՀՄ առաջին խմբի առաջնության առաջին տուրում ապրիլի 5-ին Արովյանի «Կոտայք»ը պետք է ընդուներ Բաքվի «Նեֆչի»ին, սակայն հյուրերը չժամանեցին, եւ մեր թիմին նպաստեցին հաղթանակ տալ:

Բարձրագույն խումբ ապրիլի 5-ի դրությամբ

		Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1.	ԲԿՄԱ	5	5	0	0	13-2	10
2.	Դնեպր	5	3	1	1	4-2	7
3.	Արարատ	6	3	1	2	3-4	7
4.	Շախտյոր	5	2	3	0	5-2	7
5.	Տորպեդո	5	2	2	1	8-5	6
6.	Չերնոմորեց	5	1	3	1	4-2	5
7.	Սպարտակ Մ.	3	2	0	1	4-3	4
8.	Մետալիստ Խ.	5	2	0	3	4-6	4
9	Մետալուրգ Ջ.	5	2	0	3	4-6	4
10.	Դինամո Կ.	4	1	2	1	4-5	4
11.	Լոկոմոտիվ	5	1	2	2	5-8	4
12.	Պամիր	5	0	4	1	1-2	4
13.	Դինամո Մն.	5	1	1	3	5-6	3
14.	Դինամո Մ.	5	1	1	3	4-8	3
15.	Պախտակոր	4	0	2	2	3-5	2
15.	Սպարտակ Վ.	4	0	2	2	3-7	2

digitised by A.R.A.R.@

ՋԱՎԱԽՔՑԻՆԵՐԸ ԺԽՏՈՒՄ ԵՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Խոշտարիան օրերս Մոսկվայում, Վրաստանի ներկայացուցչությունում «Ազգ» թերթի թղթակցին հայտարարեց, թե կենտրոնի մեղքով իրադրությունը լարվել է նաեւ Ջավախքում, թե այնտեղ «ժամանակավոր կառավարություն» է կազմվել: Այդ հայտարարությունը վրդովմունքով է ընդունվել Ջավախքում: Ահա թե այդ մասին հեռախոսով ինչ է հայտնում «Ջավախք» ժողովրդական շարժման նախագահ Սամվել Պետրոսյանը:

- Ախալքալաքի հիմնարկ-ձեռնարկությունների ու տնտեսությունների կոլեկտիվների եւ ղեկավարների հիմնական հոգսը այն է, թե ինչպես կայունացնել Վրաստանի նոր ղեկավարության որոշ գործողությունների հետեւանքով ստեղծված առանց այն էլ անկայուն իրադրությունը: Բանն այն է, որ իշխանության նախկին մարմինները լուծարված են, միայն այս հանամանքը բավական է, որպեսզի իրադրությունը անկայուն դառնա, որովհետեւ իշխանության նոր մարմինները տակավին չեն ստեղծված եւ հայտնի էլ չէ, թե ինչ կազմներով պետք է ստեղծվեն: Երրամասում փաստորեն անիշխանություն է, սկ դա միշտ էլ լարվածությամբ է հղի: Դրությունը ավելի բարդացավ, երբ Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահ Զվիադ Գամսախուրդիան որոշեց լուծարել նաեւ վարչական նախկին բաժանումը՝ շրջանը, դրա փոխարեն ստեղծելով պրեֆեկտուրա եւ պրեֆեկտի ինստիտուտ: Իշտ է, դա հանրապետության ներքին գործն է, բայց երբ փորձում են պրեֆեկտին շանակել կենտրոնից, ապա այստեղ դեմոկրատիայի խախտումը բացահայտ է: Պրեֆեկտը պետք է մարմնավորի ողջ գործադիր իշխանությունը, ուստի նա չի կարող նշանակվել կենտրոնից, այն պետք է ընտրվի ժողովրդի կողմից: Դրա հետեւանքով ստեղծված լարվածությունը մեղմելու համար, որոշվեց Ախալքալաքում հասարակական կարգով ստեղծել մի ժողովրդական մարմին՝ լիազորների ժողով, որը կկարողանա լրացնել իշխանության բացը: Ժողովուրդը հավանություն տվեց այդ գաղափարին: Աշխատավորական կոլեկտիվների կողմից ընտրվեցին 143 լիազորներ, նրանց ժողովը ընտրեց իր մարմինը՝ 25 հոգուց կազմված լիազորների խորհուրդ: Խորհուրդը գործերը կառավարում է կոլեգիալ ընկալմամբ: Մինչդեռ Վրաստանի արտգործնախարար Խոշտարիան այդ հարցում էլ ապակողմնորոշող հայտարարություն է արել՝ ասելով, թե իբր այդ «ժամանակավոր կառավարության» ղեկավար է նշանակվելու Սամվել Պետրոսյանը: Լիազորների ժողովը իր գործունեությամբ ցույց տվեց, որ ստեղծվել է ճիշտ ժամանակին եւ ապահովում է կարգ ու կանոնը անիշխանության մատնված երկրամասում: Ավելին, լիազորների ժողովը իր նպաստը բերեց Վրաստանի պետականության անկախության վերականգնման հարցի հանրաքվեի կազմակերպման գործին: Այդ ուղղությամբ բացատրական մեծ աշխատանք տարվեց, հիմնական գաղափարն այն էր, որ պետականության վերականգնումը գերագույն նպատակ է եւ՝ հայ, եւ՝ վրաց ժողովուրդների համար, ուստի հարկավոր է քվեարկել հօգուտ Վրաստանի անկախության: Եւ ժողովուրդը միահամուռ «այո» ասաց Վրաստանի անկախությանը:

ՑՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀԴ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Ապրիլի 2-ին Կիրովականի երկաթուղաիների մշակույթի տանը տեղի ունեցավ այ Հեղափոխական Դաշնակցության քաաքական դիվանի ներկայացուցիչներ Ռուեն Հովսեփյանի եւ Հրայր Կարապետյանի անդիպումը հասարակայնության հետ: Նրանք իրենց ելույթներում անդրադարձան այ դատի, պահանջատիրության, Արցախի, այաստանի ներքին եւ արտաքին հարաբերություններին: Նշվեց ՀՀԴ-ի այն հատուկ դրդորոշումը, որ Արցախը նույնպես պետք մասնակցի հանրաքվեին, որպեսզի անախությունը լիարժեք լինի: Հայտարարաց, որ ՀՀԴ-ի ներկայացուցիչը Կիրովականում քաղխորհրդի գործկոմի համակարգիչ լրատվության կենտրոնի վարիչ Էդիկ Ղարուզյանն է: Վերջում Ռ. Հովսեփյանն ու Հ.Կարապետյանը պատասխանեցին տարբեր կուսակցությունների եւ կազմակերպությունների ներկայացուցիչների հարցերին: Այն հարցին, թե ինչ հարաբերության մեջ է դաշնակցությունը Ռամկավար ազատական կուսակցության հետ, Ռուբեն Հովսեփյանը պատասխանեց. *«Չնայած որոշ տարաձայնություններին, ռամկավարների հետ մենք ունենք համատեղ գործելու ենարավորություններ: Ընդհանրապես մենք բոլոր կուսակցությունների եւ կազմակերպությունների հետ գործելու ենք միասնության եւ համախմբվածության սկզբունքով»*: □

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՅԴ Հայաստանի Հայ Դատի յանձնախումբն ապրիլի 22-ին ժ. 19-ին նկարչի տան առջեւ «Մոսկուա» կթ-ի հրապարակում) կազմակերպում է մոմավառութիւն նուիրուած 1915 թուականից մինչեւ Սումգայիթ Հայոց եղեռնի զոհերի յիշատակի ոգեկոչման:

Մոմավառութեանը կարող են մասնակցել անհատներ եւ կազմակերպութիւններ: Այս նպատակով յատուկ պատուիրուած 76 մոմերից իւրաքանչիւրը վառելու իրաւունք ձեռք բերելու համար էտք է վճարուի 1000-ական ռուբլի:

Նոյն օրը, նոյն տեղում կազմակերպւում է գեղանկարչական կտաւների եւ կիրառական արուեստի նմուշների աճուրդ-վաճառք:

Մոմավաճառութիւնից եւ աճուրդից գոյացած գումարները յատկացուելու են Ադրբեջանի տասնեակ հայերի ցեղասպանութեան զոհերի ընտանիքներին եւ Հայ Դատի խնդիրների հետապնդման նպատակին:

Վճարումը կատարւում է կանխիկ, փոխանցումով (Հայաստանի Հանրապետութեան առեւտրաին բանկի Սպանդարեան բաժանմունք, հաշուի թիվ 1609406, ՀՅԴ Մամլոյ եւ տեղեկատու կեդրոն):

Ձեզ հետաքրքրող հարցերի համար կարող էք վանգահարել 56.35.07 եւ 44.55.11 հեռախօսամարներով:

ՀՅ Դաշնակցութեան Հայաստանի Հայ Դատի Յանձնախումբ

արունակություն 1-ին էջից

7 հազար հոգուց բաղկացած լիբանանյան սնակի ուժին: Այդ ուժերը մասնավորաես տեղադրված են Սուր քաղաքի նասնանգստի մոտ, որտեղից եւ պարեավորվում են, ինչպես նաեւ երկրի հյուսում եւ Բեքաայի հովտում: 1973 թվին անց զինվելը դարձավ գլխավոր պատսը, որ Լիբանանի մարոնիթ քրիստոնաները նույնպես զինվեն, ինչը 1975-ին ենկեցրեց լիբանանյան հայտնի պատեազմը, որ արյունալի հանգրվաններով ընթացավ մինչեւ անցյալ հոկտեմբեր ամիսը:

Թունիսից, որտեղ գտնվում է ՊԱԿ-ի գլխավոր հրամանատարությունը, պաղեստինցիները երեքշաբթի օրը հայտարարել էին, որ իրենք պատրաստ են լիբանանյան իշխանությունների հետ բանակցել պաղեստինցիների հետագա կարգավիճակի մասին: Սակայն լիբանանյան կառավարության մի բանբեր պատասխանեց, որ իր երկիրը նրպատակ չունի Լիբանանում ՊԱԿ-ի զինյալ ներկայության շուրջ որեւէ խոսակցություն վարելու, սակայն պատրաստ է բանակցելու գաղթականների սոցիալ-առողջապահական կարիքների մասին: □

ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ

Ե՞ՐԲ ԿԼՑՎԻ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԿԸ

ՄՈՍԿՎԱ, 5 ապրիլի

Մեր հատուկ թղթ. Հ. ԱՍԱՏՐՅԱՆ

Կրեմլը շարունակում է «ավանդական» պահմտոցին, իսկ հանքափորները սպասում են...*«Երկրի սոցիալ-տնտեսական իրադրության ապակայունացման պատասխանատվությունը պետք է դրվի ոչ թե հուսալքված բանվորների, այլ ԽՍՀՄ ղեկավարության վրա»*, - հայտարարեց խորհրդային եւ արտասահմանյան լրագրողների համար տըրված մամլո ասուլիսում, Ռուսաստանի անկախ արհմիությունների ֆեդերացիայի փոխնախագահ Վասիլի Ռոմանովը: Ըստ նրա, Ռուսաստանում կարելի էր կանխարգելել հանքափորների գործադուլները, եթե կենտրոնը կոնֆլիկտի ծագումից անմիջապես հետո նստեր բանակցությունների սեղանի շուրջ:

Գործադուլային ճգնաժամից դուրս գալուն կօգներ նաեւ ՌԽՖՍՀ-ի հանքափորների արհմիությունների ստեղծումը: Քանզի այն մասնատված իրավիճակը, որ տիրում է հանքափորների շրջանում, խանգարում է համախմբվել: Ուստի, ծրագրվում է ապրիլի վերջին հրավիրել հանքափորների արհմիությունների 1-ին համագումար, անցկացնել Ռուսաստանի բոլոր աշխատավորների միասնության օր: Արդեն հանքափորների օգնության հիմնադրամի հաշվին փոխանցվել է 300 հազար ռուբլի:

Հայտնի է, որ ԽՍՀՄ վարչապետի հետ հանդիպման ժամանակ չընդունվեց հանքափորների հիմնական պահանջները: Դրանք ստացան *«տնտեսապես անհիմն»* եւ *«ապակայունացման տանող էլեմենտներ»* պիտակները: Հետեւաբար, վարչապետի եւ պրեզիդենտի հանդիպումները հանքափորներին մեկ անգամ եւս համոզեցին, որպեսզի անվստահության քվեն պահվի ուժի մեջ:

Վորկուտայի քաղաքային բանվորական գործադուլային կոմիտեի քարտուղար Ի. Մինաեւան ավելացրեց, որ հանքափորները շարունակում են պնդել՝ կատարելու իրենց առաջադրած բոլոր քաղաքական պահանջները, այդ թվում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ վերընտրություն, ԽՍՀՄ պրեզիդենտի համաժողովրդական այլընտրական ընտրություններ: Դրանից կատ. Պեչորայի ավազանի հանքափորները միութենական կառավարությունից պահանջում են պաշտոնական այնպիսի փաստաթուղթ, որը կարգելեր ներկա գործադուլավորների հետագա հետապնդումը:

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԻ ՀԵՐԹՈՒՄ

Բելոռուսիայի մայրաքաղաք Մինսկում շարունակվող «հայի» իրարանցումը շատ գլխապտավանք պատճառեց առեւտրի եւ միլիցիայի աշխատողներին: Ինչպես հաղորդում է «ԻՏ»-ի թղթակիցը, մի քանի օր առաջ այդ իրարանցումն ավարտվեց ողբերգությամբ: Պարտիզանական պողոտայում «Բելոռուսիա» հանրախանութի դիմաց հայի հերթում տրորվեց 7-ամյա մի տղա: Ցավոք, դեպքի վայր հասած շտապօգնությունն արդեն ուշացել էր:

ՄԻՆՍԿՈՒՄ ԿԱՆԳ ԵՆ ԱՌԵԼ ՋԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Չորեքշաբթի, ապրիլի 3-ին, Մինսկում կայացան մի շարք խոշոր գործարանների աշխատանքային կոլեկտիվների բողոքի հանրահավաքներ՝ ուղղված գների բարձրացման դեմ: Հինգշաբթի առավոտվանից դադարեցրին աշխատանքը ավտոգործարանն ու տրակտորի գործարանը: Առավոտյան ժամը 11-ի մոտ կանգ առան Մինսկի ձեռնարկությունների մեծամասնությունը:

Յուգարարների շարասյուներն ուղղվեցին Լենինի հրապարակ՝ դեպի կառավարության տուն: Հրապարակում հավաքվեցին մոտ 10 հազար մարդ:

Յուգարարների պահանջներն էին՝ երկուերեք անգամ աշխատավարձի բարձրացում, 5 տոկոս հարկի վերացում, մանկական ապրանքների գների աճման դեմ փոխհատուցում, ԽՍՀՄ պրեզիդենտի, միութենական կառավարության, ԽՍՀՄ եւ Բելոռուսիայի Գերագույն խորհուրդների հրաժարականները: Յույսը կոորդինացնում էին բանվորական միությունը, Բելոռուսիայի ազգային ճակատի արմատական թեւը:

Լուր ստացվեց, որ Ժոդինոյում գտնվող «ԲԵԼԱԶ» գործարանը կանգ է առել:

Ուրբաթ, ապրիլի 5-ին Մինսկի քաղաքային գործադուլային կոմիտեն հանդիպում ունեցավ Բելոռուսիայի կառավարության ղեկավարության հետ, նախօրյակին մասսայական հանրահավաքի ժամանակ առաջ քաշած պահանջները քննարկելու համար:

Այնինչ ըստ Մինսկից ստացվող տեղեկությունների, գործադուլի ղեկավարները որոշեցին դադարեցնել այն մինչեւ ապրիլի 10-ը: Եթե մինչ այդ պահանջները չբավարարվեն, նախատեսված է անցկացնել համաքաղաքային գործադուլ:

Մինսկի մարզի Ժոդինո քաղաքում չէին աշխատում մի շարք ձեռնարկությունների առաջին հերթափոխի աշխատողները:

Բողոքի հանրահավաքներ անցկացվեցին Գրոդնո եւ Գոմել քաղաքներում:

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՋԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

Չորեքշաբթի, ապրիլի 3-ին, Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությունը ընդունեց դիմում՝ ուղղված ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Դիմումի մեջ նշվում է, որ *«Միութենական իշխանության սաղրիչ գործողությունները, հատուկ դրության կամ պրեզիդենտական կառավարման սահմանումը Վրաստանի տարածքի որեւէ մասում, կորակվեն իբրեւ պատերազմի հայտարարություն Վրաստանի Հանրապետությանը»*: Վրաստանի խորհրդարանը հայտարարում է, որ այդպիսի իրավիճակի հնարավոր հետեւանքների ամբողջ պատասխանատվությունը կընկնի ԽՍՀՄ ղեկավարության վրա:

ԱՆՀԱՆԳԻՍՏ Է ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐՈՒՄ

▬ ԽՍՀՄ ՆԳՆ-ին մոտ աղբյուրները հաղորդում են, որ երեքշաբթի օրը Ղազախստանի Կարագանդայի մարզի ՆԳՎ հատուկ աշխատանքային ուղղիչ գաղութում հայադուլ են հայտարարել ավելի քան 500 թոքախտով հիվանդ բանտարկյալներ: Նրանք պահանջում են սննդի բարելավում եւ բուժում:

▬ Նույն օրը Ռոստովի մարզում գտնվող խիստ աշխատանքային ուղղիչ գաղութում մոտ 350 բանտարկյալներ հրաժարվեցին սնունդ ընդունելուց, նրանց դժգոհում են գների բարձրացումից եւ պահանջում են շաքար:

▬ Այնինչ Օրենբուրգի մարզում գտնվող բուժաշխատանքային պրոֆիլակտորիումում մոտ 100 հոգի դուրս չեն եկել աշխատանքի: Նրանց պահանջը մեկն է. վերացնել այդ հիմնարկը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՎԹԱՐԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՈՒՂՂԱԹԻՌԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՒՄ ԷՐ ԱԴՐԲԵՋԱՆԻ Ն.Գ. ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ

Համաձայն ստացված հաղորդագրության, չորեքշաբթի, ապրիլի 3-ին, ԼՂԻՄ-ի Շուշիի շրջանում վայրէջքի ժամանակ վթարի ենթարկվեց Մի-8 ուղղաթիռը, որը պատկանում էր Ադրբեջանի ՆԳՆ-ին: Ուղղաթիռի մեջ կային 18 ուղեւոր, որոնց թվում Ադրբեջանի փոխնախարար Ն. Յուսիֆովը: Նա ստացավ թեթեւ մարմնական վնասվածքներ: Յուսիֆովին ցույց տրվեց բժշկական օգնություն: Ուղղաթիռը վառվեց: Ուրիշ զոհերի կամ տուժածների մասին չի հաղորդվում: □

ԹԱԹԱՐՅԱՆԸ ՉԿԱ ԱՅԼԵՒՍ

1991 թվականի ապրիլի 2-ին ծանր հիվանդությունից հետո, 64 տարեկան հասակում կյանքից հեռացավ Հայաստանի Հանրապետության Ժողովրդական պատգամավոր, «Հայգազարդ» արտադրական միավորման գլխավոր տնօրեն, վաստակաշատ շինարար Գեորգի Անդրեյի Թաթարյանը:

Ռամկավար ազատական կուսակցությունը եւ «Ազգ» թերթի խմբագրությունը ցավակցում են հանգուցյալի հարազատներին եւ բարեկամներին:

ԶԶ եռօրյա թերթ. հասցեն՝ Երեւան 375010, Ալավերդյան 47
հեռ. 58-18-41, ֆաքս (8852)562941
ZG semi-weekly, 47 Alaverdian St., Yerevan, Armenia, USSR 375010
phone: 58-18-41, fax: (8852)562941
Խմբագիր՝ Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ
Editor H. AVEDIKIAN
Կոմպյուտերային հրատարակություն
Լույս է տեսնում չորեքշաբթի, շաբաթ
Դասիչ՝ 69149 Գինը՝ 30 կոպ.
Տպագրված է ՀԿԿ ԿԿ հրատարակչության տպարանում

digitised by A.R.A.R.@